


ՆԱԽԱԳԱՀ ԱՍՏԵՆԻՆԵՅՑ ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԸ

Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ ընդունեց Իրանի արտաքին գործոց Նախարար Զուեյն Ամիր Ապտուլլահեանն ու անոր ընկերակցող պատուիրակուհիները:

Կողմերը քննարկեցին երկու երկիրներու երկկողմ յարաբերութիւնները եւ տարածաշրջանի զարգացումները:

Հանդիպումի ընթացքին Նախագահ Ասատ յայտնեց, որ Կազգայի վրայ Իսրայելի շարունակուող յարձակումով Ամերիկայի Միացեալ Նահանգներ



կը սպառնայ ընդլայնել հակամարտութեան շրջանակը՝ շարունակելով սիոնիստական կազմակերպութեան մահաբեր գէնք մատակարարել: Ան դիտել տուաւ, որ Ուաշինկթըն յարձակումներ կը գործէ Մերձաւոր Արեւելքի տարբեր շրջաններու վրայ:

Նախագահ Ասատ անցնելով ըսաւ, որ սիոնիստական շարժումը եւ Արեւմուտքը այսօր փակուողի մէջ են, իսկ Արեւմուտքէն այժմ կը պահանջուի փրկել այդ շարժումը, ինչ որ Իսրայելի բռնազրաւումը պաղեստինեան, սուրիական եւ լիբանանեան տարածքներու փակուողին դուրս բերելու փորձ է:

Նախագահ Ասատ յայտնեց, որ Սուրիոյ պարտականութիւնն է իր բոլոր կարելիութիւններով Պաղեստինի ժողովուրդին զօրակցիլ, քանի որ անոր դիմագրաւած տագնապը աննախընթաց է:

Իր կարգին Ապտուլլահեան յայտնեց, որ Կազգայի հարցը ոչ միայն տարածաշրջանային, այլեւ միջազգային հարց կը համարուի, իսկ Սուրիան Պաղեստինի ժողովուրդին աջակցութեան առաջատարներէն է:

ԿՈՒՆԱԻ ՄԵՋ ԳՈՐԾԱՊՈՒ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԵՅԱԼ

Չորեքշաբթի օր Կուլանի մէջ գործադուլ յայտարարուեցաւ եւ սուրիական դրօշը բարձրացաւ քաղաքին կեդրոնը, որպէս յիշատակում 14 Փետրուար 1982-ին Կուլանի մէջ տեղի ունեցած գործադուլի 42-ամեակին: Գործադուլը տեղի ունեցած էր Կուլանը Իսրայելի կցելու որոշումին որպէս մերժում:



Չորեքշաբթի օրուան գործադուլը տեղի ունեցաւ Կուլանի Մաճու Աշ-Համա, Պաքաասա, Մասաատա եւ Այն Զանիէ գիւղերուն մէջ, ուր փակուեցան դպրոցներ, առեւտրական կեդրոններ, իսկ գիւղերու հրապարակները զարդարուեցան սուրիական դրօշներով: Համախմուեցան հարիւրաւոր կուլանցիներ՝ շէշտելով, որ կառչած պիտի մասն իրենց հայրենիքին, մերժելով իսրայելեան բռնատիրութիւնը:

ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԶԻՆԵԱԼ ՈՒԺԵՐԸ ԿՐԱԿՈՅՆԵՐ ԱՐՁԱԿԵՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴԻ ՈՒՂՈՒԹԵԱՄԲ

13 Փետրուարին, Հայաստանի Ներքին Հանդիպումներու մէջ տեղակայուած հայկական դիրքերուն ուղղութեամբ Ատրպէյճանի Զինեալ Ուժերուն կրակոցին հետեւանքով գոհուած են՝

Եղուարդ Համլէթի Յարութիւնեան (1974 թ.),

Գագիկ Վարազդատի Մանուկեան (1982 թ.),

Արմէն Գագիկի Համբարձումեան (1979 թ.),

Հրաչեայ Թալիշի Յովհաննիսեան (1957 թ.):

Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան Նախարարութիւնը իր վըշտակցութիւնն ու զօրակցութիւնը յայտնեց գոհուածներու ընտանիքներու անդամներուն եւ հարազատներուն:

Յիշեցնենք, որ Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան Նախարարութեան հաղորդագրութեան համաձայն, 13 Փետրուարին, տեղւոյն ժամը 05:30-էն սկսեալ, Ատրպէյճանի Զինեալ Ուժերու ստորաբաժանումները հրաձգային գէնքերով կրակ բացած են Ներքին Հանդիպումներու մէջ տեղակայուած հայկական դիրքերուն վրայ, որուն հետեւանքով հայկական կողմը ունեցած է 4 զոհ եւ 1 վիրաւոր:



ՍՐԲՈՅ ՎԱՐՊԱՆԱՆՅ ԶՕՐԱՎԱՐՆԵՐՈՒՆ ՏՕՆԸ ՅԻՇՏԱԿՈՒԵՅԱԼ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԻՆ ՆԵՐՍ

Հինգշաբթի, 8 Փետրուար 2024-ին, Բերիոյ Հայոց Թեմի եկեղեցիներէն Ներսիս յիշատակուեցաւ հայ ժողովուրդի կեանքին մէջ անկիւնադարձային կարեւորութիւն ունեցող Սրբոց Վարդանանց զօրավարներուն տօնը:



Բերիոյ Հայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան հանդիսապետեց Սրբ. Զառանկից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ այս առիթով մատուցուած Սուրբ եւ Անմահ Պատարագին, որուն Ներկայ գտնուեցան Նաեւ Ազգ. Միացեալ Նախակրթարանի աշակերտները՝ Հոգաբարձութեան կազմին, տնօրէնուհիին եւ ուսուցչական կազմին գլխաւորութեամբ, հաղորդակից դառնալու Վարդանանց տօնէն մեզի փոխանցուող հոգեմտաւոր արժէքներուն:

Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցեց Արժ. Տ. Գառնիկ Զինյ. Չափանեանը: «Շողակաթ» երգչախումբը Պատարագի հոգեպարար երգեցողութիւնը կատարեց, ղեկավարութեամբ՝ Հոգշ. Տ. Արմէն Արղ. Գալաճեանի:

Իր հայրական պատգամը աշակերտներուն ուղղելով, Սրբազան Հայ-Շար.՝ 19 9 ➤



021 2110 958



www.kantsasar.com



kantsasarweekly@hotmail.com



www.facebook.com/kantsasar

Տեղական Լրագրող

Խմբագրական

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ՝ ԼԵՉՈՒԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՈՒՆՆ ԿՈՒԹՈՎ

21 Փետրուարը Լեզուի Միջազգային օրն է:

Այս առիթով անհրաժեշտ է լուսարձակի տակ բերել քանի մը երեւոյթներ, որոնց լուծումով շատ բան կրնայ փոխուիլ արեւմտահայերէնի ուսուցման ու որպէս մայրենի լեզու պահպանման գործընթացին մէջ:

Առաջինը արեւմտահայերէնի մասնագիտական ուսուցման համար ուսուցիչներու պատրաստութիւնն է գաղութի եւ ընդհանրապէս Սփիւռքի մակարդակով:

Այս առումով թէեւ ունինք, օրինակ, Զալէայի Զամազգայինի Զայագիտական Զիմնարկը, սակայն ցանկալի է հիմնարկի եւ Երեւանի պետական համալսարանի միջեւ գործակցութեան եզրեր որոնել ու նոյնիսկ հիմնարկին մէջ ծառայելու համար պատրաստել մասնագետ ուսուցիչներ, որոնք անարտելով Զալէայի Զայագիտական Զիմնարկը կարելիութիւն ունենան մասնագիտական լու լեզուի, գրականութեան եւ մանկավարժութեան ճիւղերուն մէջ ու մեր ապագայ դասախօսներն ու հայկական վարժարաններու ուսուցիչները դառնալու:

Երկրորդը՝ արեւմտահայերէնի բառամթերքին հարցն է, յատկապէս մասնագիտական նիւթերու առնչուող բառամթերքի սակարկութիւնը:

Սփիւռքի մեր վարժարաններէն ներս հայերէնով դասաւանդուող երեք առարկայ գոյութիւն ունի՝ Զայոց լեզու, Զայ գրականութիւն եւ Կրօն, կարգ մը համայնքներէ ներս նաեւ՝ Զայոց Պատմութիւն: Գիտական մնացեալ առարկաները կը դասաւանդուին տուեալ երկրին պետական լեզուով, ինչ որ մեր աշակերտներու բառային պաշարը աղքատ կը պահէ: Բացառութիւն կը կազմեն այն աշակերտները, որոնք ընթերցելու մեծ պապակ ունին ու այդ պապակը կը յագեցնեն ոչ միայն գրական, այլեւ արուեստի, գիտութեան առնչուող հայերէն գիրքեր ըմբռնիսելով:

Բարեբախտաբար Բերիոյ Զայոց Թեմի ազգային վարժարաններուն համար պատրաստուած հայերէնի վերջին դասագիրքերուն մէջ, հեղինակ՝ դոկտ. Յակոբ Չոլաքեան նկատի առած է իւրաքանչիւր կարգի աշխարհագրութեան եւ գիտութեան արաբերէնով դասաւանդուող առարկաները եւ համապատասխան հայերէն նիւթեր ներառած դասագիրքերուն մէջ՝ համապատասխան հայերէն եզրերով:

Յաւոյքով, մեր օրերուն չեն հրատարակուիլ Պոլսոյ եւ հետագային Սփիւռքի կարգ մը համայնքներու մէջ հրատարակուած երբեմնի բժշկական կամ արուեստի պարբերականները, որոնք այնքան հարուստ էին արեւմտահայերէն համապատասխան բառամթերքով: Այդուհանդերձ այս առումով օգտակար կը համարուին թարգմանական աշխատանքները, որոնց միջոցաւ կարելի կ'ըլլայ վերականգնելու ու աստիճանաբար օգտագործման մէջ դնել արեւմտահայերէնի գիտական կամ մշակութային ոլորտներուն առնչուող բառերը:

Արեւելահայ թարգմանական գրականութիւնը բաւական հարուստ է, չենք կրնար նոյնը ըսել արեւմտահայ թարգմանական գրականութեան մասին, թէեւ գնահատելի են Գալուստ Կիւլպէնկեան Զիմնարկութեան, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, նոյնիսկ երբեմն կաթողիկոսութեան թեմերուն եւ այլ հաստատութիւններու կողմէ խրախուսուած եւ ցարդ իրականացած թարգմանական աշխատանքները:

Գնահատելի է «Նայիրի» բառարանի հսկայածաւալ աշխատանքը այս առումով, ուր ներառուած են մեծաթիւ մասնագիտական բառարաններ: Այդ բառարանները օգտագործելու կարելիութիւններ պետք է ստեղծուին հայկական վարժարաններէն ներս, հաւանաբար վարժութիւններու կամ տնային աշխատանքներու ճամբով:

Յօդուածի մը սահմաններուն մէջ կարելի պիտի չըլլայ լեզուի պահպանման եւ կիրարկման առնչուող բոլոր հարցերը պարզել ու անոնց լուծումները քննարկել: Փափաքելի է, որ համայնքի ուսումնականութեան մարմինները նման հարցերու շուրջ խորհրդողովներ, քննարկումներ կազմակերպեն՝ մասնակիցներու լայն շրջանակ ապահովելով ու միասնաբար լուծումներու մասին խորհելով:

«Գ.»

- Երեքշաբթի, 13 Փետրուար 2024-ի առաւօտուն, Բերիոյ Զայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, Ազգ. Առաջնորդարանի իր գրասենեակէն ներս հիւրընկալեց Բերիոյ Զայոց Թեմի «Գանձասար» պաշտօնաթերթի խմբագիր Չարմիկ Պողկեանը:




Մտերմիկ մթնոլորտի մէջ ընթացող հանդիպումին, «Գանձասար»-ի խմբագիրը անդրադարձաւ տպագրուող թերթին, կայքէջին եւ դիմատետրի էջին միջոցով խմբագրակազմին տարած գործունեութեան: Ան անդրադարձաւ 2024 տարուան «Գանձասար-Բացառիկ»-ի պատրաստութեան աշխատանքներուն եւ անոր բովանդակած հարուստ նիւթերուն: Այս առիթով, ան օրինակ մը նուիրեց Սրբազան Զօր:

Սրբազան Զայոց իր հայրական օրհնութիւնները փոխանցելով, գնահատեց «Գանձասար»-ի խմբագրակազմին կատարած յոյժ կարեւոր գործունեութիւնը, որ իրողապէս հայ մամուլը ներկայութիւն կը դարձնէ մեր առօրեայ կեանքէն ներս, եւ կատարեալ յաջողութիւն մաղթեց անոր:

- Նախագահ Ասատ հրապարակեց հանրային բաժնետիրական ընկերութիւններու եւ միատեղ ձեռնարկութիւններու ստեղծման, պետականացման եւ կառավարման առնչուող -3- թուակիր օրէնքը: Օրէնքին նպատակն է նպաստել պետական եւ տնտեսական հատուածի զարգացման՝ կարգաւորելով հանրային բաժնետիրական ընկերութիւններու, հանրային բաժնետիրական ընկերութիւններու ստեղծումը:



-Սուրիոյ երկրաշարժի ազգային կեդրոնը յայտարարեց, որ Զորեքշաբթի, 14 Փետրուարին երկու երկրաշարժներ ցնցած են Սուրիոյ հիւսիսարեւմտեան Նահանգները: Առաջինը ժամը 10:56-ին, կեդրոնը՝ Իսկէնտերուն քաղաքը, խորութիւնը՝ 57 քմ., ուժգնութիւնը՝ 3,2 ռիխթըր, որ ցընցած է Սուրիոյ Իտլիպ Նահանգի հիւսիսարեւմտեան շրջանը, իսկ երկրորդը ժամը 11:56-ին, կեդրոնը՝ Լաթաքիոյ հիւսիսարեւելեան շրջանը, խորութիւնը՝ 40 քմ., ուժգնութիւնը՝ 4,3 ռիխթըր:



-Զինուորական ադրբիւրներ 9 Փետրուարին յայտնեցին, որ սուրիական օդային պաշտպանութեան ուժեր յետմիջօրեի ժամը 14:10-ին վար առած են Դամասկոսի հարաւը ուղղուող անօդաչու թռչող երկու սարքեր, որոնք սուրիական օդային տարածք մտած էին սուրիական բռնագրաւուած Կոլանի կողմէն:



-Սուրիան քանի մը պատերազմ մղած է Իսրայէլի դէմ եւ պատրաստ է նորերուն, յայտարարած է Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ֆէյսալ Մըքտատ Դամասկոսի մէջ Իրանի արտաքին գործոց նախարար Զուսէյն Ամիր Ապտուլլահեանի հետ մամուլի ասուլիսի ընթացքին, յայտնած է ռուսական РИА Новости -ը:



Սուրիոյ արտաքին գործոց նախարարը անցնելով ըսած է, որ Իսրայէլի, ԱՄՆ-ի եւ Թուրքիոյ կողմէ երկրի տարածքին մէկ մասին բռնագրաւումը անօրինական է, ընդգծելով, որ Սուրիա «պատրաստ է ազատագրելու իր հողերը»:

Լուրեր Հայաշխարհին

ԱՐԱՐԱՏ ՄԻՐՉՈՅԵԱՆ. «ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՄԻՋԵՒ ՆՈՐ ՍԱՀՄԱՆ ԴԵՏՔ ԶԵ ՍՏԵՂԾՈՒԻ»

Հայաստանի արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեան եւ րոմբուրգի-Հայաստան Գործընկերության խորհուրդի հինգերորդ նիստի աւարտին, Եւրոմիութեան արտաքին յարաբերութիւններու եւ անվտանգութեան քաղաքականութեան հարցերու բարձր ներկայացուցիչ ժոզէֆ Դորելի հետ միատեղ մամուլի ասուլիսի ընթացքին յայտարարեց, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սահմանազատման գործընթացով նոր սահման պետք չէ ստեղծուի, պետք է տեղւոյն վրայ վերարտադրուին Ալմա-Աթայի հռչակագիրով եւ հետագային կողմերուն հաւանութեամբ վերահաստատուած սահմանները:



ՀՀ արտաքին գործոց նախարարը վերահաստատեց Հայաստանի հաւատարմութիւնը այն համաձայնութիւններուն, որոնք արտացոլուած են Յոկտեմբեր 2022-ին Փրակի մէջ եւ անցեալ տարուան աշնան Կրանատայի մէջ քառակողմ հանդիպումներուն ընդունուած յայտարարութիւններուն, ինչպէս նաեւ այն համաձայնագրերուն մէջ, զորս յայտարարած է Եւրոպական Խորհուրդի նախագահ Շառլ Միշել՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի դեկլարանտներուն հետ եռակողմ հանդիպումներէն վերջ:

«Մենք համոզուած ենք, որ Հայաստան եւ Ատրպէյճան պետք է վերահաստատեն, որ կը ճանչնան իրարու տարածքային ամբողջականութիւնը՝ հիմնուելով 1991 թուականի Ալմա Աթայի հռչակագրին եւ Խորհրդային Միութեան իրաւասու եւ լիազօրուած մարմիններու կողմէն մշակուած ամենավերջին քարտէջներուն վրայ, ու ատիկա պէտք է հիմք դառնայ երկու երկիրներու սահմաններու սահմանազատման համար: Սա կը նշանակէ, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սահմանազատման գործընթացով նոր սահման պետք չէ ստեղծուի, սակայն պետք է տեղւոյն վրայ վերարտադրուին Ալմա Աթայի հռչակագիրով եւ կողմերու հաւանութեամբ հետագային վերահաստատուած սահմանները», ընդօժեց նախարար Արարատ Միրզոյեան:

ՀՅ ԴԱՆՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԲԻՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉԸ ՀԱՆԴԻՊԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԶԱՆԱՏԱՅԻ ԴԵՄՊԱՆԻՆ

ՀՅ Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ եւ Հայ Դատի Կեդրոնական Խորհուրդի նախագահ Յակոբ Տեր Խաչատուրեան 9 Փետրուարին հանդիպած է Հայաստանի Հանրապետութեան մէջ Զանատայի արտակարգ եւ լիազօր դեսպան Էնտրիւ Թըրնտերի հետ: Տեր Խաչատուրեան շնորհաւորած է դեսպանը Յոկտեմբեր 2023-ին Երեւանի մէջ քանատական դեսպանատան բացման առիթով, ինչ որ պիտի նպաստէ Զանատա-Հայաստան յարաբերութիւններու զարգացման:

որոշման վերաբերեալ: 2020 թուականի Յոկտեմբերի սկիզբը Օթթաուան կասեցուցած էր դէպի Թուրքիա ռազմական նշանակութեան արտադրանքի արտահան-



Հանդիպումին ընթացքին ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչին կողմէ բարձրացուած հիմնական հարցերը կը վերաբերէին Զանատայէն առկայ անկնկալիքներուն՝ նկատի ունենալով Ատրպէյճանի ցեղասպանական գործողութիւններու միջոցով կրցախի ցեղային զտումը, Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ համաձայնագրի շուրջ ընթացող բանակցութիւնները, յատկապէս ատրպէյճանական սպառնալիքները, Ատրպէյճանի կողմէ Հայաստանի Հանրապետութեան տարածք փաստացի ներխուժումն ու բռնագրաւումը եւ այլն: Մտահոգութիւններ ինչպէս նաեւ Զանատայի կառավարութեան՝ Թուրքիա ռազմական արհեստագիտութեան արտահանման արգելքը վերացնելու մասին վերջին

ման թոյլտուութիւնները՝ մասնաւորապէս այն սարքաւորումները, որոնք Թուրքիան կ'օգտագործէր իր անօդաչու թռչող սարքերուն մէջ, որոնք այլ այնուհետեւ կ'ուղարկուէին դէպի Ատրպէյճան եւ կ'օգտագործուէին 2020 թուականի 44-օրեայ պատերազմի ժամանակ հայերը թիրախաւորելու համար:

Դեսպան Թըրնտերը վերահաստատած է իր կառավարութեան դիրքորոշումը առ այն, որ պետք է յարգուի Արցախի ժողովուրդի վերադարձի իրաւունքը, եւ որ Զանատան վճռակաւ խորհուրդի Հայաստանի տարածքային ամբողջականութեան, ինչի վկայութիւնն է Եւրոպական Միութեան դիտորդական առաքելութեան մասնակցելու իր որոշումը՝ ի պատասխան Հայաստանի իշխանութիւններուն պաշտօնական խնդրանքին: Եւրոպական Միութեան դիտորդական առաքելութիւնը տեղակայուած է Հայաստան-Ատրպէյճան սահմանի հայկական կողմը 2022 թուականի Յոկտեմբերէն՝ նպատակ ունենալով նպաստել Հայաստանի եւ Ատրպէյճանի բնակչութեան եւ, կարելիութեան պարագային, անոնց իշխանութիւններուն միջեւ վստահութեան ամրապնդման:

ԻՐԱՆ ԱՏՐՊԵՅՃԱՆԻՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԶՄԴՈՒՄԾՈՒԹԵԱՆ ԿՈՉ ՈՒՂԱԾ Է



Իրան անդրադարձած է Հայաստանի դեմ Ատրպէյճանի հերթական յարձակումին՝ կրկնելով վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու կոչը:

Անդրադառնալով Հայաստանի Սիւնիքի մարզի Ներքին Հանդ բնակավայրի հատուածին մէջ տեղակայուած հայկական դիրքերուն ուղղութեամբ Ատրպէյճանի զինեալ ուժերու կրակոցներուն, որոնք հետեւանքով Հայաստան 4 գոհ ունի՝ Իրանի Արտաքին Գործոց Նախարարութեան մամուլի խօսակարար Քանաանին յայտնած է, որ Իրան մտահոգուած է սահմանային լարուածութեամբ:

Քանաանի Ատրպէյճանի եւ Հայաստանի կոչ ուղղած է զսպուածութիւն ցուցաբերելու:

Ան դիտել տուած է, որ երկխօսութիւնն ու դիւանագիտութիւնը միակ ճամբան են կովկասեան տարածաշրջանին մէջ կայուն եւ մշտական խաղաղութեան հասնելու համար՝ միաժամանակ կոչ ուղղելով երկու երկիրներուն արագցնելու խաղաղութեան համաձայնագրին հասնելու ջանքերը:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՅ ԵՐԵՍՓՈՒՄԱՆ ՅԱԿՈՒ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ ԵՒ ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԷԼԵԱՆԸ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա. իր նստավայրին մէջ ընդունեց Լիբանանի խորհրդարանի հայ պատգամաւոր Յակոբ Բագրատունին՝ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեանը:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Հայաստանի շուրջ ստեղծուած արտաքին հարցերն ու անոնց վերաբերեալ առկայ մտահոգութիւնները: Ծեշտը դրուեցաւ երկրի ամբողջականութիւնն ու անվտանգութիւնը պահպանելու հրամայականին վրայ: Անդրադարձ կատարուեցաւ նաեւ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները աւելի խորացնելու կարելիութիւններուն, յատկապէս հայ ժողովուրդի՝ Հայրենիքի ճակատագրական այս փուլին:



Դեսպան Թըրնտերը վերահաստատած է իր կառավարութեան դիրքորոշումը առ այն, որ պետք է յարգուի Արցախի ժողովուրդի վերադարձի իրաւունքը, եւ որ Զանատան վճռակաւ խորհուրդի Հայաստանի տարածքային ամբողջականութեան, ինչի վկայութիւնն է Եւրոպական Միութեան դիտորդական առաքելութեան մասնակցելու իր որոշումը՝ ի պատասխան Հայաստանի իշխանութիւններուն պաշտօնական խնդրանքին: Եւրոպական Միութեան դիտորդական առաքելութիւնը տեղակայուած է Հայաստան-Ատրպէյճան սահմանի հայկական կողմը 2022 թուականի Յոկտեմբերէն՝ նպատակ ունենալով նպաստել Հայաստանի եւ Ատրպէյճանի բնակչութեան եւ, կարելիութեան պարագային, անոնց իշխանութիւններուն միջեւ վստահութեան ամրապնդման:

Զանատայի դեսպանը նաեւ վերահաստատած է, որ քանատացի արտահանողներուն ծանուցուած է առ այն, որ նոր պաշտպանական արտահանման համար դիմումները կը պահանջեն հաւաստիացումներ Թուրքիայէն, ուր կը նշուի, որ արդեօք տրամադրուած արհեստագիտութիւնը պիտի վերաարտահանուի Երրորդ կամ ՕԹԱՆ-ի անդամ չհանդիսացող երկիրներ, եւ արդեօք անոնք պիտի ներառուին սպառնալիքներուն մէջ:

90 վայրկեան տեւողութեամբ հանդիպումը ավարտեցաւ երկուստեք պատրաստակամութեամբ՝ շարունակելու նման հանդիպումները ապագային եւ կարելիութեան պարագային համագործակցելու փոխշահաւետ նախաձեռնութիւններով՝ տարբեր ոլորտներու մէջ ամրապնդելու Զանատա-Հայաստան յարաբերութիւնները:

ԱԼԻԵԻ ԴԻՄԱԿԸ ՎԱՐ ԱՌՆՈՂ ՄԸ



Ս. Մահտերճեան

France 24 պատկերասփիւռի կայանը Երկուշաբթի, 12 Փետրուարին, տեղեկագրական-վաւերագրական հաղորդումներուն շարքին (Reporters), լուսարձակի տակ բերաւ Ատրպէյճանի բռնատիրական վարչակարգին եւ անոր բռնապետին հակաժողովրդավար ընթացքը, մարդու իրաւունքներու աղաղակող ոտնակոխումի փաստերը եւ այլ բաներ:

Հաղորդումը, անգլերէնով, անլի քան 22 վայրկեան է եւ խորագրուած՝ Torture in Azerbaijan: Europe looks away (Տանջանքները Ատրպէյճանի մէջ. Եւրոպա ուրիշ կողմ կը նայի), կարելի է գտնել հետեւեալ կապով. <https://youtu.be/A99kbwShmvl>

Ժապաւենին բացումը կատարուեցաւ Ալիեի ու վարչախումբին հակառակորդ եւ Ֆրանսա ապաստանած երիտասարդի մը հետ գրոյցով (որմէ մասնիկներ տրուեցան նաեւ անլի ուշ): Ան բանտարկուած է եւ ծանր տանջանքի ենթարկուած, որովհետեւ քննադատած է Ալիեի մենատիրական բռնատիրութիւնը: Ֆրանսայի մէջ ալ, քանիցս «անծանօթներ» յարձակում կրած է եւ ծանրօրէն վիրաւորուած: Հաղորդումը գրոյցներ կը բովանդակէր Ատրպէյճանի մէջ մարդու իրաւանց պաշտպաններու, նմանապէս բռնադատութիւններու ենթարկուած ու ազերի նախկին դեսպանի մը հետ, որոնք բացայայտեցին Ատրպէյճանի իշխանաւորին բռնատիրութեան տարբեր երեսները: Լուսարձակի տակ բերուեցան Եւրոպական Համայնքին եւ Ատրպէյճանի յարաբերութիւններուն մէջ քանի ծալքերը, օրինակ՝ «խաւիարի դիւանագիտութիւն»-ը, Ատրպէյճանի հետ բարեկամութեան հիմերն ու քարիւղի ապահովումը եւ այլն:

Վաւերագրականը յայտնապէս պատրաստուած էր Ատրպէյճանի մէջ նախագահական վերջին ընտրութիւններուն խայտառակութիւնները բացայայտելու միտումով, քանիցս շեշտուեցաւ, որ Ատրպէյճանի բանտերուն մէջ կան բազմահարիւր քաղաքական բանտարկեալներ, որոնց մասին միշտ ալ հերքում տրուած է Պաքուէն, եւ սակայն, Եւրոպական խորհուրդը վերջերս չկրցաւ կու տալ սուտերը եւ ժամանակաւորապէս կախակայեց ազերի ներկայացուցիչները: Հպանցիկ ակնարկութիւն կատարուեցաւ նաեւ Հայաստան-Ատրպէյճան «պատմական թշնամութեան» ու Արցախի գրաման:

Եթէ փորձենք խտացնել հաղորդումին միտք բանին, կրնանք ըսել, որ տեղեկագրողները կ'ուզեն ցոյց տալ, որ հոն՝ Կովկասի հարաւային գօտիին մէջ, կայ մենատիրական-բռնատիրական երկիր մը, որուն նկատմամբ Եւրոպա հանդուրժողութիւն ցոյց կու տայ շահադիտական նկատումներով, ընդհանրապէս չ'ուզէր տեսնել դաժան իրականութիւնը եւ հմայուած է քարիւղով ու խաւիարով:

Նման հաղորդումներ, այսինքն՝ Ատրպէյճանի ու Թուրքիոյ իրական դեմքը ցոյց տուող փաստագրումներ հազուադէպ են արեւմտեան - եւ ոչ միայն արեւմտեան - աշխարհին մէջ:

Իրականութեան մէջ, եթէ քիչ մը քննական մօտեցումով դիտենք հաղորդումը, կրնանք արձանագրել բազմաթիւ նկատողութիւններ, նաեւ թերի մասեր: Սկսելու համար, ո՛չ մէկ ակնարկութիւն եղաւ մեծ ոճիրին՝ Արցախի պաշարման, անոր վրայ կրկնակի եւ մահասփիւռ յարձակումներուն, հայաթափման՝ որ ցեղասպանական արարք է ի վերջոյ, ո՛չ ալ Նոյնինքն նախագահական ընտրութիւններուն խայտառակ բեմադրութեան մասին: Յետոյ, երբ կը խօսուէր բազմահարիւր քաղաքական բանտարկեալներու մասին, որոնց յանցանքը Ալիեի քննադատել է, ո՛չ մէկ ակնարկութիւն եղաւ այն հայերուն մասին (Արցախի պետական գործիչներ, զինուորներ, պարզ քաղաքայիններ), որոնք գերի ու պատանդ կը մնան Պաքուի մէջ:

Եւրոպական խորհուրդէն արտաքսուած ազերի պատգամաւոր մը, նաեւ ազերի դեսպան մը յայտարարեցին, որ իրենց երկրին մէջ քաղաքական բանտարկեալներ չկան: Ազերի պատգամաւորը մինչեւ իսկ ժպտեցաւ ըսել հարց տուող լրագրողին, որ թերեւս ձեր երկիրներուն մէջ կան քաղաքական բանտարկեալներ (յստակ չէր, թէ հարցնողը արդեօք Հայաստանէն էր...): Իսկ եթէ հարց տանք, որ France 24-ը ինչո՞ւ այս շեղումը կատարած է (չէ՞ որ եւրոպական գանգուածային մամուլը, Նոյնինքն Պորէլներ եւ այլ ներկայացուցչական դեմքեր խանդավառ են Ալիեի վերընտրութեամբ եւ կը յամառին չտեսնել անոր բռնատիրական ընթացքը), կրնանք ատոր պատասխանն ալ գտնել: Վերջին շրջանին, Ատրպէյճանի եւ Ֆրանսայի միջեւ «սեւ կատու» մը անցած է: Ատրպէյճան իբրեւ կողմնակալ կը մեղադրէ Ֆրանսան եւ գայն կը դատապարտէ Հայաստանը զինելու յանցանքով, Ֆրանսա ալ, իր կարգին, համապատասխան հակադարձութիւններ կը կատարէ: Մանրամասնութիւնները ծանօթ են, այդ թղթածրարին մէջանը տակաւին թաց է (հիմա մելան չի գործածուիր, գիտենք):



ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ




Արմէն Աքեղայ

«Այժմ, Ո՛վ Տէր, համաձայն քու խոստումիդ՝ ձգէ՛, որ ծառայ խաղաղութեամբ մեռնի»: (Ղկ 2.29)

Վերոյիշեալ մարգարեաշունչ ոգիով, Սիմէոն Ծերունի տաճարին մէջ դիմաւորեց ծնողքին հետ տաճար այցելող, տաճար ընծայող Յիսուս Փրկչիչը, որ աշխարհ եկաւ երկնային խաղաղութիւն պարգեւելու փոթորկալից սիրտերուն: Ան եկաւ իբրեւ փրկիչ աշխարհի: Եկաւ՝ երկիրը երկինքին կամրջելու եւ աստուածային լոյսով լուսաւորելու մարդոց մթազնեալ հոգիները:

Պահ մը երեւակայեցէ՛ք, թէ Աստուած, իբրեւ սիրոյ արտայայտութիւն, իր փառքը ձգելով երկիր իջաւ՝ խոնարհելու մարդոց առջեւ (Յհ 3.16): Մարդը, որ դարձած էր Աստուծոյ ստեղծագործութեան գերագոյն եւ գլուխ գործոց էակը, սայթաքած էր եւ աստուածային պատուանդանէն դուրս ելած էր: Սակայն Աստուած տեսնելով մարդուն խեղճացած վիճակը, անգամ մը եւս իր աստուածային ձեռքը երկարեց, պաշտպանելու համար մարդ անհատը:



Քրիստոսի ծնունդը, ինչպէս Աւետարանը կ'ըսէ, սիրոյ արտայայտութիւն էր: Աստուած սիրեց իր ստեղծագործութիւնը եւ այդ իսկ պատճառով Լոյսը դրկեց, սակայն մարդիկ խաւարը անլի սիրեցին քան Լոյսը, որովհետեւ խաւարին մէջ կրնային գաղտնի արարքներ գործել: Բայց Աստուած Լոյսը դրկեց, որպէսզի անգամ մը եւս մարդուն առիթ ընծայէ իր աստուածային պատկերը վերագտնելու:

Սիմէոն Ծերունին Լոյսը տեսած էր իր գիրկին մէջ, եւ այդ իսկ պատճառով Տիրոջմէն խնդրեց, որ իր հոգին յետայսօրիկ կրնար առնել: Ան Լոյսը ապրած ու ճաշակած էր, անոր երազանքով ապրած, եւ ահաւասիկ ընծայման օրը, այդ երազանքը իրականացած եւ ճշմարտացած էր տաճարին մէջ:

Տեառնընդառաջի տօնը Տիրոջ ընդառաջ երթալու իրաւեր է բոլորիս: Տեառնընդառաջի տօնը յաւերժական Լոյսի, ճշմարիտ Լոյսի փառաբանանքի օրն է, եւ այդ փառաբանութեամբ Լոյսը կ'ընդունինք մեր մէջ, մեր անձերը յառաջ կը տանինք դէպի Լոյսը, Որն է Քրիստոս:

Ըստ Ս. Գրիգոր Տաթեւացիին. «Խարոյկին հուրը բորբոքելով՝ Աստուծոյ սիրոյ հուրը կը խնդրենք: Հեթանոսները Աստուծոյ պատիւը կրակին կը մատուցէին, իսկ քրիստոնէաներս կրակը կը ծառայեցնենք Աստուծոյ»:

Իսկ Ս. Եփրեմ Խուրի Ատրիին Տեառնընդառաջին նուիրուած ճառին մէջ կը գրէ. «Ձահերն ու խարոյկները ունին հետեւեալ պատճառները. Նախ որովհետեւ հեթանոսները Աստուծոյ պատիւը կրակին կը մատուցէին, իսկ մենք ցոյց կու տանք կրակը իբրեւ Քրիստոսի ծառայ, որուն համար կը բերենք Աստուծոյ ծառայեցնելու: Նաեւ, վրայէն թռչելով, գայն ոտնատակ կ'ընենք, ըսելով, թէ դուն աստուած չես, այլ Ան է Աստուած, Որ քառասուն օրական եկաւ տաճար»:

Սիրելիներ, Լոյսը անելով տանինք մեր տուները, եւ այս Լոյսը ինչ է եթէ ոչ Նոյնինքն Քրիստոս: Քրիստոսն է, գՐՈ պիտի տանինք մեր ընտանեկան երդիքներն ու մեր ներաշխարհը լուսաւորելու համար:

Այդ Լոյսը թող լուսաւորէ մեր թանձրացած միտքերը:
Այդ Լոյսը թող լուսաւորէ մեր սառած հոգիները:
Այդ Լոյսը թող լուսաւորէ մեր քարացած սիրտերը:

Պատարագի աւարտին, բոլորս միասնաբար կ'երգենք «Մատի՛ք առ Տէր եւ առէ՛ք զԼոյս», եկէ՛ք, Լոյսին մօտենանք եւ անկէ առնենք, որպէսզի լուսաւորէ մեր կեանքը, մեր գործերը եւ մեր գաւակները: Եւ այդ Լոյսին ճամբով է, որ մեր եկեղեցին, ազգը եւ ժողովուրդը կը դառնան հաւատքի անսպառ գանձատուն:

Սիրելի՛ հարազատներ, Չնմանինք այն փարիսեցիներուն, որոնք ուզեցին Լոյսը խաւիանել: Զգործենք արարքները կեծաւորներուն, որոնք ուզեցին Լոյսը մթազնել իրենց խաւար գործերուն համար: Չնմանինք օրէնքի ուսուցիչներուն, որոնք Լոյսը խաչ բարձրացուցին, առանց իմանալու, որ այդ Լոյսը յաւերժ լուսաւոր պիտի մնար աշխարհի երեսին վրայ: Այլ ըլլանք Լոյսի որդիներ, սիրոյ որդիներ, Լոյսը փնտռողներ, բանանք մեր հոգիները՝ Տիրոջ կենարար Լոյսը ընդունելու համար եւ այդ Լոյսէն կայծ մը տանք մեր սիրելիներուն, խաւարին մէջ մնացողներուն, որպէսզի վերջին դատաստանին կարենանք Լոյսին դիմաց կենալ եւ ըսել. «Փառք գալստեան քո Տէր»: Ամէն:

«ՆԱԼԵՊԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ»... ՄՓԻՒՌՔԱՆՎՅՈՒԹԵԱՆ ԳՈՅԱՏԵՒՈՒՄԸ (SUSTAINABILITY)


(Ա. ՄԱՍ)

Փրոֆ. Արա Սայեդ

«Յալեպի Ողբերգություն»-ը մեծաչափ, գունագարդ լուսանկարներով, որակաւոր տպագրութեամբ հատորի մը խորագիրն է, հրատարակուած 2017-ին՝ լեհերէնով, 206 էջի ծաւալով:

Անդրանիկ տղաս՝ Գեորգը, այս գիրքը գնած էր Յայոց Յեղասպանութեան եւ Յալեպի հետ առնչուած նիւթի մասին իր ւարտաճառի պատրաստութեան համար:

Գեորգ, Սուրիոյ ահարկու պատերազմի ցաւալի մրմուռը համտեսած էր՝ տեսնելով իր ընտանիքի, ծնողներու եւ նախնիներու բնակած շէնքին ամբողջութեամբ փուլ գալը, սուրիական գորքերուն ընդդէմ ահաբեկչական եւ ընդդիմադիր խմբաւորումներու առճակատումներուն եւ պայթումներուն հետեւանքով: Գեորգ 12 տարեկան դեռատի պատանի մըն էր, երբ Յալեպէն հեռացաւ միլիոնաւոր տնանկ մնացած սուրիացիներու նման:



Յոգեւտանջ ողբերգութիւն մըն էր՝ տիրութեան կեղեցիչ գագացում, երբ ապրած շէնքիդ փլատակներուն տակ անդարձ կը թաղուէին տոհմական Սատունէն, Խարբերդէն, Այնթապէն բերուած կալուածներու, ինչքերու սեփականատիրութեան վկայագրեր, կրթութեան վկայականներ, տասնիններորդ դարու պատկանող Աստուածաշունչեր: Նուագագոյն երեք սերունդներէ ժառանգուած հայ մշակոյթի պատկանող նիւթերէն մասունքներ, բազմալեզու, բազմահազար գիրքեր, պատմական տարբեր սրբութիւններ, Յայոց Յեղասպանութենէն փրկուած եւ երկար տարիներով խնամքով պահուած փշրանքներ, օրհնաքեր պատահիկներ, ինչէ՛ր կարելի է յիշել ու վերյիշել:

Ճիշդ է որ յիշողութիւնը, վերոյիշումը երբեմն տանջող են, բայց միշտ ալ սփիւռքահայուն համար հաւաքական վերոյիշումը ընկալուած է որպէս անցեալի վերակառուցումը: Յայու յիշողութեան մշակոյթը՝ մշակութաբանութիւնը (Cultural anthropology), ընդունուած է որպէս ո՛չ միայն ինքնութեան հիմնական բաղադրիչներէն մին, այլեւ՝ ինքնութիւնը ինքնին:

Պարտադրուած բռնի տեղահանութեան նման, նախնիներու ճակատագրի կրկնութիւնն էր՝ բռնագաղթի անորոշ խաչմերուկին դիմաց կանգնողի հրամայական որոշում մը: Յարագատ ծննդավայրէն, ենթահողէն հեռանալու անբեկանելի ընտրանքին դէմ յանդիման, ընտանեօք պարտադրաբար Յոկտեմբեր 2012-ին հեռացած էինք ծննդավայր Յալեպէն: Մէկ կողմէ համտեսելով առեւանգումի եւ սպանութեան սպառնալիքի անողորմ ազդարարութիւնը՝ «Դուք հայերդ պետական իշխանութեան թիկունքին եք, պետութեան կողմնակից եք» մեղադրանքով: Յայերը միշտ ալ կը մեղադրուին ոչ միայն իշխանամետ ըլլալու, այլ նոյնիսկ՝ չեզոքութեան համար: Իսկ դաժանագոյնը՝ ետին թողով քարոքանող մեր բնակարանի, շէնքի քարակոյտը եւ սեփական այլ կալուածներ՝ որոնք դժբախտաբար միւսն էր այսօր սուրիական պետական գերիշխանութեան սահմաններէն հեռու են՝ չեն վայելեր Սուրիական պետական ինքնիշխանութեան ներկայութիւնը: Յոգիս կ'ալեկոծի, երբ վերոյիշեմ ետին թողած հիմնովին տապալուած մեր ապրած շէնքին աներակները:

Մենք, ինչպէս նաեւ հազարաւոր հալեպահայեր, սուրիահայեր տարանցիկ կանգառներով, երամ-երամ դէպի վերջնական կանգառներ անվերադարձ հեռացանք, իմա՝ արտագաղթեցինք, ընդլայնելով հայ Սփիւռք կոչուած թնճուկին տարածքն ու խորութիւնը: Ինքնայօժար հեռացում մը չէր, բայց երագային Յալեպի տպաւորութիւնները, մեր ծնողներուն, նախնիներուն հոն ապրուած անջնջելի յիշատակները՝ վստահաբար քանդակուած ու առկայծ կը մնան իբրեւ խորտակուած երագներ մեր յիշողութեան կայծկըտուքին մէջ, եւ իբրեւ սեփականը կորսնցուցած մեր հոգեխոց (trauma) մորմոքի ենթագիտակցութեան մէջ:

Ճակատագրի դաժան ընկճախտը (depression), հարկադրիչ այս անկիւնադարձը մեր հոգիներուն մէջ պիտի մնայ, ծննդավայրի հանդէպ իբրեւ ճնշող կարօտախտ մը, քօղարկուած մշտայուշ վիշտ մը:

Գեորգ ծննդավայրի իր կարօտն ու գուրգուրոտ հոգատարութիւնը

խտացուցած էր վերոյիշեալ գիրքի ինքնախօս լուսանկարներու յարակցութեան մէջ, երբ գնած գիրքը ներկայացուց ըսելով՝ «Յայրի՛կ, տե՛ս մեր սիրելի Յալեպին առնչուող վաւերագրական լուսանկարներու ինչպիսի գիրք մը հրատարակուած է»:

Ծանօթագրութեան կարգով կարելի է յայտնել, որ գիրքի լեհ համահեղինակ՝ Ատամ Պուեաք, արհեստավարժ եւ հանրածանօթ ռազմական, ճակատամարտերու, խիզախ, միջազգային լուսանկարիչ մըն է, արկածախնդրութիւնը յանձն առած, տագնապի ու աղետալի պայմաններու մէջ, մանաւանդ Յալեպի ամենէն բռնկուն եւ դժոխային տարիներու սարսափելի իրավիճակները իր ոսպնեակով վաւերագրելու՝ տագնապի անողորմ գոյալիճակը լուսանկարներով ամրագրելու ծրագիրով Սուրիա եկած էր, երբ բազմահազար տեղացիներ երկնառաք մոգական փրկութեան հնարքներ կը փնտռէին, երկրին մէջ աւելի ապահով շրջաններ տեղափոխուելու եւ անվտանգ ապրելու նպատակով հեռաւոր, խաղաղ երկիրներ արտագաղթելով, նոյնիսկ իբրեւ գաղթականներ, տեղահանուածներ, փախստականներ կամ այլ որակումներով:

Տագնապի առաջին օրերուն Սուրիոյ հայ համայնքի մէջ, այն հաստատ համոզումը կար, որ օրերու, շաբաթներու, առաւելագոյն մէկ երկու ամսուան մէջ կ'աւարտի ընդդիմութիւններու, պոռթկումներու, պատերազմական ահ ու դոհի իրավիճակը: Սակայն մեր Սփիւռքի պատմութեան բովերու պճեղ մը ծանօթութիւնը, տեղւոյն եւ շրջանի հետ աշխարհաքաղաքական առողջ վերլուծումը, վտանգին եւ սպառնալիքներուն չափի սահմանները, յետպատերազմեան տնտեսական հետեւանքներու ողջամիտ եւ հեռատես արժեւորումը բաւարար էին հասկնալու եւ արդարացնելու արտագաղթողներու պատճառաբանութիւնը:

Վերոնշեալ գիրքին խմբագիրն է հոգեւորական՝ փրոֆ. հայր Վալտեմար Չիսլոն: Քանիցս Սուրիա այցելած այս լեհ հոգեւորականի կենսագրականը կարելի է խտացնել, որ օգնութեան հասնելու՝ «Կարիքաւոր Եկեղեցւոյ Օգնութիւն» ծրագրի այս ղեկավարը, իր ներգործութեամբ պահ մը մեզ կը յիշեցնէ, կամ գայն կարելի է նմանցնել քսաներորդ դարու Յայոց Յեղասպանութեան ժամանակաշրջանին յաւետ յիշատակութեան արժանի մարդասեր իրշտակներուն, անմոռանալի դանիացի ու սքանտիսաւիացի միսիոնարուհիներուն, որոնք հասած էին աղետեալ վայրեր եւ իրենց մարդասիրական օժանդակութիւնն ու նիւթական կարելիութիւնները ի սպաս դրած էին հայութեան, իրենց նմաններուն հանդէպ անգնահատելի բարեգործութիւններով ու գործնական երախտարժան մասնակցութեամբ:

Վերոյիշեալ լեհ հոգեւորականը, ծանօթ է Միջին Արեւելքի մէջ՝ Իրաք, Սուրիա, Լիբանան, Յորդանան եւ այլուր: Կենաց եւ մահու տագնապներու, անհրաժեշտ կարիքի մէջ գտնուող քրիստոնէայ հաւաքականութիւններու հանդէպ իր մարդասիրական անխնայ պատրաստակամութեամբ, անսահման իր օգնութիւնները հասցուցած է վերոյիշեալ երկիրներու տառապեալներուն: Կարելի է վկայել նաեւ, որ Լեհաստանի տարբեր յարանուանութիւններու պատկանող եկեղեցիներու մէջ, համալսարաններու, հանրային կեդրոններու, կայարաններու եւ պետական գանազան հաստատութիւններու, կառոյցներու մէջ յատուկ տուփիկներով, գանձանակներով «Յալեպի Յամար» խորագրեալ նիւթական հանգանակութիւններ կազմակերպելու արշաւին լծուած այս հոգեւորականի ընթացքին մասին: Յաւաքուած գումարները օգնութեան շիթեր էին պատերազմի տարիներուն ու տակաւին կը շարունակուին այսօր ալ տեղացի տառապեալներուն համար: Իր քարոզչական աշխատանքով, հանգանակութիւններով, նուիրատուութիւններու հաւաքներով, հարցազրոյցներով օրինակելի բարեսէր մըն է կարիքաւորներուն, իր նուիրուածութեամբ, օգնութեամբ եւ ծառայութեամբ: Ի վերջոյ ո՞վ չի վկայեր կամ չի հաստատեր հանրածանօթ «Լեհաստանի Զարիթաս»-ի բարեսիրական ու հոգատար բարեգործութիւնները, ծառայութիւնները Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, որուն գլխաւոր դերակատարներէն մին է յիշեալ հոգեւորականը: Խորապէս ըմբռնելի ու համոզիչ է, նման հայրենասէր լեհ հոգեւորականի մը կողմէ քրիստոնէավայել մարդասիրական օժանդակութեան մղիչ խանդը, օգնութեան կամքը:

Յասկնալի են նաեւ, Լեհաստանի դէմ գերմանական եւ Խորհրդային Սովետական Միութեան գորքերու կողմէ բարբարոսութիւնները, անմարդկային եւ գարշելի բռնագրաւումները, չարչարանքները համտեսող լեհ ազգի գաւկի մը համար:

Միւս կողմէ, 2010-էն սկսեալ, ժողովրդավարութեան կեղծ ու խաբուսիկ լոգունգի պատրանքներով սկսած միջազգային շահերու բախումները եւ փոխադարձաբար գիրար վերացնելու նպատակով Միջին Արեւելքի մէջ նոյն միջազգային սարդիչ որոմնացաններու նենգաբարոյ դաւադրութեամբ բոցավառող «Արաբական գարուն» անուանեալ իրշային պատուհասը, իրենց քանդիչ ու թունաւոր ծիւղեր կը փորձէին ծաղկեցնել, հասնելով Սուրիա Մարտ 2011-ին, այդ պատճառով մեծ թիւով գաղթականներու հսկայ ալիք մը կ'աշխուժանար դէպի Եւրոպա, անոր մէջ ըլլալով ստուար թիւով քրիստոնէաներ, հայեր:

2015-էն սկսեալ, Լեհաստանի պետութեան այդ ժամանակաշրջանի քաղաքական իշխանութեան յստակ դիրքորոշումն ու հաստատակամ որոշումն էր՝

1) Մենք գաղթականներ չենք ընդունիր, բայց երբեք պիտի չզլանանք մեր նիւթաբարոյական օգնութիւնները հասցնել այդ երկիրներուն մէջ բոլոր տառապեալներուն,

2) Օժանդակել քրիստոնէայ փոքրամասնութիւններուն՝ չհեռացնելու գիրքը իրենց հաստատուած բնակավայրերէն ու արմատացած բնակարանէն, պահելու համար անոնց դարաւոր քրիստոնէական դիմագիծը,

Թուրքիոյ նուրջ

ՄԱՆՐԱՎԷՊԵՐ



Դոկտ. Յակոբ Չոլաքեան

ԱՄՆ ՔՈՆԿՐԵՍԸ ՈՐՈՇԱԾ Է ՀԱԻՆՈՒԹԻՒՆ ՏԱԼ ԹՈՒՐԷՒՈՅ 40 ՆՈՐ «ԷՖ-16»-ՆԵՐ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԱՐՔԻՆ

Միացեալ Նահանգներու Քոնկրեսը որոշած է հաստատել Թուրքիոյ 40 նոր «ԷՖ-16» հալածիչներ վաճառելու եւ արդէն վաճառուած «ԷՖ-16» հալածիչներու արդիականացման գործարքը: Այս մասին «Էքս»-ի վրայ յայտնած է Անգարայի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատունը:

«Քոնկրեսի այս շարժումն որոշումը՝ հաւանութիւն տալու Թուրքիոյ կողմէ 40 նոր «ԷՖ-16» հալածիչներու ձեռքբերման եւ եւս 79-ի արդիականացման, մեծ յառաջընթաց է: Թուրքիոյ մէջ «ԷՖ-16» հալածիչներու գոյութիւնը չափազանց կարեւոր է ՕԹԱՆ-ի ուժերուն համար՝ դաշնակիցներուն միջեւ ապագայ փոխգործունակութիւնը ապահովելու համար», կը նշուի դեսպանատան յայտարարութեան մէջ:



Թրքական «ԹԷ.ՌԷ.ԹԷ.» պատկերասփիւռի կայանը կը նշէ, որ թրքական դիմումի վերանայման երկշաբաթեայ հոլովոյթը, որ սկսած էր 26 Յունուարին, աւարտած է գործարքի հետագայ իրականացման համար առանց որեւէ խոչընդոտի:

Այս ընթացքին քոնկրեսականները կրնային առարկութիւններ ներկայացնել: Ատիկա ըրաւ միայն ծերակուտական Ռեւոտ Փոլը՝ իր առարկութիւնը փոխանցելով Արտաքին Յարաբերութիւններու յանձնախումբին: Սակայն, ինչպէս կը նշէ պատկերասփիւռի կայանը, անոր դիմումը հետագայ յառաջընթաց չէ ունեցած մինչեւ թրքական դիմումի քննարկման ժամկետի աւարտը: Այսպիսով, Միացեալ Նահանգներու օրէնսդրութեան տեսակետէն Թուրքիոյ կործանիչներու վաճառքը աւարտին հասցնելու համար խոչընդոտներ չեն մնացած:

ԹՈՒՐԷՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈԽԱՆՅԱԾ Է ԱՆԻ ԴԱՏԱՎԱՆ ԿԱՄՈՒՋԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ԻՐ ԴԱՏԿԵՐԱՅՈՒՄՆԵՐԸ

«Sputnik Արմենիա» - Թուրքիան Յայաստանին փոխանցած է Անիի պատմական կամուրջի վերականգնումի իր պատկերացումները: Այս մասին յայտնած են ՀՀ արտաքին գործոց նախարարութենէն՝ պատասխանելով «Sputnik Արմենիա»-ի գրաւոր հարցումին:



«Թրքական կողմը Յայաստանին փոխանցած է Անիի պատմական կամուրջի վերականգնման տեքնիք գործընթացը կազմակերպելու վերաբերեալ իր պատկերացումները», նշուած է պատասխանին մէջ:

«Թրքական կողմը Յայաստանին փոխանցած է Անիի պատմական կամուրջի վերականգնման տեքնիք գործընթացը կազմակերպելու վերաբերեալ իր պատկերացումները», նշուած է պատասխանին մէջ:

1.- Ի՞նչ կ'ուզեք՝ անուանեցեք

Եղբայր, ինչ կ'ուզեք՝ անուանեցեք, սնահաւատութիւն, սնտիապաշտութիւն... Ուրիշ բառ կա՞յ չեղածն ու չըլլալիքը իբրեւ եղած ընդունելու հաւատքին համար: Բայց կայ այդ հաւատքը, ու անկէ ձերբազատիլ հնարաւոր չէ: Մեզի հաւատացուցած էին, որ նոր քոյրիկները ծովէն կը բերեն, եւ ես աչքով տեսածի պէս, այդպէս իրական, տեսայ, թէ ի՞նչպէս հայրս իշուկին պախուրցէն բռնած՝ մտաւ մեր բակը, իշուկին վրայ՝ Լուսին քոյրիկս...

– Ծովէն բերի, – ըսաւ հայրս:

Աչքիս ամշէն է պատկերը:

Հիմա դուն կը ծիծաղիս, ես ալ կը ծիծաղիմ: Բայց չե՞ որ տեսայ, տեսայ աչքով տեսածի պէս:

Կ'ըսեին նաեւ, որ մանչուկները կը բերեին Զորքենց ձիթենիի փչակէն:

Հսկայ ձիթենի մըն էր:

Փչակին մէջ կիներ երբեմն մոմ կը վառէին,

աղար կը կապէին ծառի ճիւղերուն:

Կ'ըսեին, թէ անոնք մանչ գաւաակ կը խնդրեն:

Ես ալ կ'ուզեի, քոյրերս ալ կ'ուզէին, որ Զորքենց ձիթենիի մեզի աղբարիկ մը տայ:

Օր մը պահմտոցիկ խաղալու ատեն՝

Շամբոն մտեր էր փչակին մէջ: Գտայ ու լաւ մը տփոցեցի:

– Ի՞նչ գործ ունիս աղբարիկիս քով, – ըսի:

Իմ ալ աղբարիկս այդտեղէն պիտի գայ, – պատասխանեց Շամբոն լալազի:

Հեքիաթը մեզի հետ էր ամէն տեղ:

2.- Աճուճ-Պաճուճները

Ի հարկէ, գիւղի տղաքս ժամանակ կը գտնէիք մեզ մէ բացի, մեզ մէ դուրս այլ եակներով ալ հետաքրքրուելու: Աղջիկները փսփսուքով բաներ մը կը պատմէին տունը՝ պահարաններուն, օժիտի սնտուկին ու մառանին մէջ իրենց այն տնեցիներուն մասին, գորս «մեզ մէ լաւերը» կը կոչէին: Մանչերը աւելի հետաքրքրուած էին խոր անտառներուն մէջ, ծմակ տեղերը մեծ բազմութեամբ ապրող աճուճ-պաճուճներով, որոնք մէկ թիգ հասակ ու եօթը թիգ մօրուք կ'ունենան եղեր: Կը պատմէին, թէ ասոնք պիտի տիրեն աշխարհին, եւ ատիկա պիտի ըլլայ աշխարհին վերջը: Ասոնք այժմիկ բաներ էին, ու մեր երեւակայութեամբ՝ ծառի ցօղունին վրայ վեր ու վար ընող մրջիլներէն շատ չէին տարբերեր: Ասոնք մէ չէինք վախնար: Թփուտներուն տակ կը փնտռէիք աճուճ-պաճուճները:

Ծանոն պարսատիկով կարմրալանջ թռչուն մը վիրաւորեր էր: Թռչունը ինկեր էր թփուտին մէջ: Ուր կ'ուզէս ինչայ՝ որսորդը պիտի վազէ անոր ետեւէն: Մտաւ ճանտն թփուտին մէջ, սողաց ու գնաց: «Գտա՞ր» կը կանչէինք բացատէն: «Հիմա» կը պատասխանէր ան մութ տեղերէն:

Ու մէջ մըն ալ ճչալ եւ պոռալ սկսաւ:

– Մամա՛, աճուճ-պաճուճները վարտիքիս մէջ մտան, հասե՛ք, կը խայթեն զիս:

Վազեցիք, մտանք թփուտին մէջ, ոտքերէն քաշելով հանեցիք դուրս, քաշեցիք իջեցուցիք կարճ տաբատը, որ լեցուն միջին է: Փտուկ փայտին մէջ բոյն դրած մրջիլները լեցուած էին տղուն վարտիքին մէջ:

– Չէ՛, ասոնք չէին, աճուճ-պաճուճներն էին, – կը պնդէր ճանտն:



ԱԼԻԵԻԻ ԴԻՄԱԿԸ...

Սկիզբ՝ էջ 4

Ինչո՞ւ կ'արձանագրենք այս բոլորը: Պետք կա՞յ մանրամասնօրէն բացատրելու: Իբրեւ Ատրպէյճանէն ու անոր բռնատիրոջմէն վնասուած կողմ՝ Յայաստան եւ հայութիւն, բոլոր միաւորներով, պարտաւոր ենք ո՛չ միայն հետեւելու նման հաղորդումներու, այլ նաեւ օգտագործելու նման առիթներ՝ վար բերելու համար Ալիեի ու անոր «մեծ եղբօր»՝ Էրտողանի բազմախառն դիմակները: Ալիին, մեր դիւանագիտութեան բազուկն ու քաղաքական աշխատանքի դաշտին մէջ եղողները՝ Հայ Դատ եւ նման միաւորներ, պետք է իրենք ըլլան նախաձեռնող՝ նման հաղորդումներու պատրաստութեան համար: Սա կը նշանակէ մեր ռատարներ-ը բաց պահել բոլոր ուղղութիւններով (չենք ըսեր, որ այդ ռատարները

չեն բանիր, սակայն բանողը բաւարար չէ, երբեմն կը մնայ միայնակ): Ամէնէն կարեւորը՝ պետք է վերջ տալ Երեւանի իշխանաւորներուն այն խայտառակութիւններուն, որոնց խորագիրներն են միակողմանի խաղաղութեան հետամտութիւնը, Ատրպէյճանի մէջ գործակից փնտռելը, այն Ատրպէյճանին՝ որ ոգի ի բռնի կը հետապնդէ Յայաստանն ու հայութիւնը վերջնականապէս բնաջինջ ընելու համաթուրանական ծրագիրը, եւ... գործակիցներ գտած է Երեւանի մէջ:

Ֆրանսական յիշեալ կայանին նախաձեռնութիւնը՝ Ալիեի վարչակարգին դիմակը մասամբ վար անելը բնականաբար ողջունելի է, սակայն կը մնայ կիսկատար: Սպասելի է - եւ ահա հո՛ս է մեր դերը - որ լրատու այլ աղբիւրներ եւս հետեւին այս քայլին, առեւտրական եւ շահակցական հաշիւները տեղ մը բաժնուին քաղաքական հաշուարկներէ (կարելի՞ է վստահարար այդ, քանզի այլ տեղեր կ'ըլլան, երբ համապատասխան աշխատանք տարուի), սեւն ու սպիտակը գատորոշուին եւ համապատասխան ԳՈՐԾՆԱԿԱՆ քայլեր առնուին:

Պրիմալկես

ՖԱԼ



Մարուշ Երամյան

Մեծ Պահքի երկար շրջանին, ստամոքսին ցանկությունները շրջանցելու լաւ միջոց է այս խաղը, կը կարծեմ:

Ձմրան երկար գիշերներուն, երբ տակաւին Յալէա, ինչպէս շրջանի բոլոր քաղաքները - բացի Պեյրուսէն, որ արդէն Միջին Արեւելքի Փրօթի Փաղին էր - չունէին հաճոյքներու եւ զբաղումի միջոցներ, Յալէայի միապաղաղ ձմեռ գիշերներուն ծնողքս, մօրս քեռիին՝ խալօ Արմենին եւ անոր կնոջ՝ մարթ-խալօ Նուարդին հետ *սլոթ* կը խաղար:

Ես կը փորձէի քնանալ իրենց աղմուկին մէջ, որ ընդհանրապէս հօրս բռունցքին հարուածը կ'ըլլար փայտե սեղանին, երբ «*թուղթը չէր գար*», եւ մեծ քեռի խալօ Արմենին կարծր ձայնը, որ քիթին տակէն հայիոյանք մը կը մելտար:

Չէի ներդուր. անոնց խաղը, հիմա կը մտածեմ, ինծի կու տար խաղադրութիւնը սովորական, անմիջադէպ օրուան մը աւարտին, եւ վստահութիւնը, որ վաղը նոր օր մըն է, նոյն օր մը, առանց անակնկալ ցնցումներու:

Յակառակ որ *սլոթ* սովորական խաղն էր ձմեռ գիշերներուն, ես ո՛չ *սլոթ* սորվեցայ մեծնալէս ետք, ոչ ալ ուզեցի սորվիլ:

Բայց *ֆալը* ուրիշ էր:

Մայրս յաճախ *տիվա-Նին* կրնակէն վար կը բերեր օճառի կապոյտ տուփը, որուն մէջ կը պահեր խաղի թուղթերը, եւ «*ֆալ մը բանանք, նայի՛նք ի՞նչ պիտի ըլլայ*» ըսելով, կը շարեր թուղթերը:



Հիմա ես ալ իմ կարգիս մեծ մայր դարձած, *ֆալ* կը բանամ, առանց ունենալու

հաճոյքը գաւակներուն եւ թռչունիկիս ներկայութեան: Չեմ ըսեր՝ «*Նայի՛նք ի՞նչ պիտի ըլլայ*», որովհետեւ ուղեղս կ'ըսէ թէ ի՞նչ կրնայ ըլլալ, ըստ հաւանականութեան օրէնքին, միշտ յիշելով որ կրնայ նաեւ անակնկալ մը ջրել հաւանականութեան վարկածները:

Բայց ամէն անգամ որ *ֆալ* կը բանամ, միտքս, տարօրինակ եւ քմահաճ խաղընկեր, զուգահեռներ կը գծէ այս խաղին եւ կեանքին միջեւ:

Քանի մը տեսակ *ֆալ* կայ, որոնց մէջէն կրնամ խուսանաւել տարբեր տեսակի ռազմավարութեամբ՝ klondike, spider, free cell, pyramid, tripeaks. ասոնք համացանցին վրայ են եւ համակարգիչիս վրայ կը խաղամ. ասոնցմէ երկուքը գոց թուղթեր ունին, իսկ երեքը՝ բաց. եթէ գոց թուղթերով է խաղը, ուրեմն պատահականութեան ներկայութիւնը աւելի մեծ է. ինչպէ՛ս կրնաս խաղալ, որ շահիլդ ապահովես. կա՛յ այդպիսի ձեւ. կեանքն ալ այդպէս չէ՞. ամէն բան կ'ընես յաջողելու համար, բայց երբեմն կը ձախողիս:

Դժուար խաղերը ամբողջ կեդրոնացումս լարելով կը խաղամ եւ դիւրութեամբ կը լուծեմ, եթէ լուծուելիք ըլլան: Դիւրիներն են հարցը. կարծես հոգեբանօրէն ընդունելով անոնց դիւրին ըլլալը, վար կ'առնեմ բոլոր գէնքերն եւ ... փառնաւոր կերպով կը ձախողիմ ամէն անգամ:

Դժուարներուն պարագային, եթէ բաց թուղթերով են, երբ կը տեսնեմ կարելիութիւնները եւ ըստ այդ կը կատարեմ ընտրութիւններս, տեսնելով խոչընդոտները, հաւանական քայլերը, կարելիութիւնները, եւ ընդհանրապէս լարելով ամբողջ ուշադրութիւնս, կը բացուին, երբեմն հեզասահ կերպով, երբեմն՝ դժուարութեամբ: Բայց բոլոր այլընտրանքները դիմացս են, կը տեսնեմ գանոնք, ու եթէ ձախողիմ, ուրեմն ընտրութիւնս սխալ կատարած կ'ըլլամ:

Ա՛յս տեսակի ձախողութիւնը շատ աւելի տանելի է, քան՝ գոց թուղթերով խաղին պարագային, որովհետեւ նոյնիսկ երբ բոլոր կարելիութիւնները ի գործ դնես, անակնկալները կրնան քեզ ցնցել:

Եթէ *փոքեր* սորված ըլլայի, պիտի կարենայի բացուած եւ տակաւին գոց թուղթերուն հաշուարկները ընել. եթէ Սփիւռքի մեր դպրոցներուն մէջ, Յայաստանի դպրոցներուն պէս ճատրակի դասեր ունենայինք, պիտի կարենայի հաշուել հակառակորդիս հաւանական քայլերը եւ անոնց արդիւնքները, հասկնայի հակառակորդիս մտածելակերպը եւ վստահ ըլլայի, գոնէ բարձր տոկոսով, ունենալիք յաջողութեանս - կամ ձախողութեանս - վրայ:

Կայ նաեւ այլ խաղ մը՝ Նափոլիոնը, այդ ամբողջութեամբ բաց թուղթերով շատ բարդ խաղը, որ կը շարունակեմ իսկական թուղթերով խաղալ, որովհետեւ համացանցին վրայ չկայ, կամ ես չգտայ այդ խաղը:

Այստեղ կայ նաեւ թուղթերը ամբողջութեամբ բանալ-շարելու պահը, երբ իւրաքանչիւր բացուող թուղթի հետ միտքդ արդէն կը սկսի հաւանական լուծումներ առաջարկել, յիշեցնելով քեզի, որ հակառակ այդ լուծումներուն, յաջորդ բացուելիք թուղթը կրնայ ջրել անոր հաւանական յաջողութիւնը, նոր թուղթերուն հետ նոր լուծումներ առաջարկելով:

Անշուշտ ամէն անգամ նոր խաղ մը սկսելուս, նոր ռազմավարութիւններ կը փորձեմ, պարզապէս տեսնելու համար թէ նման քայլեր արդիւնք կու տա՞ն արդեօք, թէ ոչ: Օրինակ, կ'ըսեմ ես ինծի՝ ամէնէն փոքրէն սկսիմ,

կամ՝ ամէնէն մեծէն սկսիմ շարել, կամ՝ խաղամ այնպէս, ինչպէս որ թուղթերը կու գան, առանց որոշ սթրատեժի, առանց որոշ ճիգի ...

Ամէ՛ն անգամ սակայն արդիւնքը սպասելի չըլլար. երբ կը կարծեմ թէ պիտի ձախողիմ, տարօրինակ եւ անսպասելի յաջողութիւն մը կ'ունենամ, եւ հակառակ թուղթերուն աննպաստ շարունածքին, մէկ թուղթով կը քակուի ամբողջ թնճուկը: Ուրիշ անգամներ թուղթերը այնքան գեղեցկօրէն եւ ներդաշնակ ձեւով շարուած կ'ըլլան, որ կը մտածեմ՝ այս անգամ բացուիլը ապահով է. բայց ... ճիշդ հակառակը կը պատահի:

Երբեմն նոյն խաղը կը խաղամ, տարբեր այլընտրանքներով, տարբեր թուղթեր շարժելով. արդիւնքը գրեթէ միշտ նոյնն է - թէեւ կ'ըսեն՝ պէ՛տք է աշխատելառճ դիտես, որ նոր արդիւնքի հասնիս - եթէ *ֆալը* պիտի չբացուի, չի՛ բացուիր ...

Արաբերէն (*ֆալ*) նախանշան կը նշանակէ. բարիի թէ չարի հաւասարապէս. հաւանաբար հոսկէ կու գայ խառն ի խուռն շարուած թուղթերը իրենց հերթականութեամբ շարելու խաղին անունը. եթէ կրցար հերթով դասաւորել, ուրեմն բարի է, եթէ ոչ ...

Ֆրանսերէն անունը այս խաղին patience = համբերութիւն է, որովհետեւ իրապէ՛ս համբերանք կ'ուզէ տասն անգամ չբացուող-չբացուող թուղթերը տասնմէկերորդ անգամ կրկին շարելն ու քակել փորձելը:

Ի տարբերութիւն թղթախաղի այլ տեսակներու, *ֆալը* առանձին կը խաղցուի, այդ է պատճառը հաւանաբար, որ այս խաղը *ֆրանսերէնով* նաեւ solitaire = մենակեաց կամ մենասեր կը կոչուի:

Բառին արմատը լատիներէն է՝ solitarius, որ սկզբնական իմաստով այրի կին նշանակէր է, յետոյ՝ ունէ մենակեաց, միակուրթիւնը նախընտրող մարդ. եւ որովհետեւ այս խաղը առանձին խաղցուող տեսակ է, կոչուեր է solitaire: (Անշուշտ solitaire կը կոչուին նաեւ նշանտուրքի այն մատանիները, որոնք պարզ օղակի մը վրայ մէկ հատիկ ադամանդ կ'ունենան):

Կ'ըսուի թէ առաջին solitaire-ը *ֆրանսացի* ազնուական մը ստեղծեր է, որ բանտարկուեր էր Louis XIV թագաւորին կողմէ. բանտին մէջ ժամանակը անցընելու համար սկսեր է այս խաղը խաղալ, անոր կանոնները կամաց-կամաց բիրտղացնելով:

Կ'ըսուի նաեւ, որ այս խաղը շատ լաւ միջոց է ուղեղը արթուն պահելու, արագ որոշումներ կայացնելու սովորութիւնը գարգացնելու եւ քննադատական միտք մշակելու: Խաղի մը համար այսքան յատկութիւն բնաւ վատ չէ ...

Յօրեղբայրս թշնակառու ըլլալէ ետք դարձեր էր կատաղի խաղցող մը այնքան, որ սովորէրի նոր տարբերակ մը մտածեր էր:

Փոխանակ եօթը սիւնակներ ունենալու, որոնք դէպի ձախ շարժելով մէկ-մէկ յաւելում կը կրեն՝ առաջին սիւնակը, մէկ թուղթ, երկրորդը՝ երկու եւ այսպէս, կարելի է ինը թուղթ շարել եւ երկու կողմերէն աւելցնել, մինչեւ որ մէջտեղի սիւնակը ըլլայ ինը, եւ յետոյ ձեռքին մնացած թուղթերը միայն մէկ անգամ բանալ:

Թուղթի խաղերը ընդհանրապէս միտքի խաղեր են, եւ ինչպէս բոլոր այդ խաղերը, *ֆալն* ալ հաւասարապէս պէտք ունի միտքի եւ բախտի: Ըի՛շդ կեանքին պէս:

«ՆԱԼԷՊԻ...»

Սկիզբ՝ էջ 5

3) Օժանդակել՝ չլքելու քրիստոնէական բազմադարեայ մշակութային եւ կրօնաբարոյական ստեղծագործութիւններու ժառանգութիւնը, եկեղեցիները, վանքերը, հաստատութիւնները:

Բնականաբար հոս կարելի չէ մոռնալ եւ բարձր պէտք է գնահատել թէ՛ հայ Սփիւռքի գանազան միաւորներու եւ թէ՛ Յայրենիքի վիթխարի օժանդակութիւնները, որոնք միջոց ու դարման հանդիսացան ազգակից սուրիահայութեան:

(Շար. 1)

«ԳԱՆՁԱՍԱՐ»

ՊԱՇՏՈՆԱԿԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԿԱՍ

Խմբագիր՝ Չարմիկ Գիւլբօշեան-Պօղիկեան
Սրբագրիչ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
Ձեւաւորող՝ Յովսէփ Գալօղեան
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պօղոսեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Գիւլբօշեան
Յաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամէնէն ուշը երկուշաբթի օրերը:

- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:

- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:

- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:

- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:

ՀԱՅԱՉԳԻ ՄԵՄԼՈՒՔՆԵՐԸ



Ծրարդ. Կարպիս Մինասեան

Մեմլուքներ կոչուած են ստրուկ գերիները, որոնք կը ծախուէին կամ որպէս սուր կը շնորհուէին իշխող աւագանիին: Այս ստեղծուած է արաբական Աբբասեան շրջանին՝ ութերորդ դարուն. ամրապնդելու Իսլամական Պետութիւնը: Գերիները որոշ ուսուցում մը տըր (կռուի արուեստ եւ իսլամական կրօնը) կը տրամադրուէին ծառայելու բանակին, պետական պաշտօններուն եւ սպասարկելու իշխող աւագանիին: Մեմլուքները բաղկացած են մանուկ կամ անչափահաս ճորտերէ, որոնք ընդհանրապէս թուրք, մոնկոլ, չերքէզ, քիւրտ, վրացի, հայ, սիրեաք եւ ղպտի ազգեր էին: Մեմլուքներու գոյութիւնը շարունակուած է մինչեւ 1517 թուական, իսկ օսմանցիներու մօտ շարունակուած է «ենիչերիներ» անուանակոչութեամբ, մինչեւ 18-րդ դարու վերջաւորութիւն:

Մեմլուքներու փաղանգին կը պատկանի ... Ռուստամ Ռագա հայորդին:

Հօրենական անունով Յովնան Խաչատուրեան ծնած է Թիֆլիս 1782-ին, արցախցի ծնողքէ: Ունեցած է երկու եղբայր եւ երկու քոյր, 1795-ին,

տը: Ելի Պաքրի բարեկամ էր Նափոլիոնին եւ երբ Նափոլիոն կը վերադառնայ դէպի Շամ կատարած իր արշաւէն, Պաքրի կը դիմաւորէ մեծ հիւրը եւ Ռիտայի Նժոյգը կը նուիրէ անոր: Նափոլիոն շնորհակալութեամբ կ'ընդունի զայն ու կը պահանջէ երկու մեմլուք: Ռիտա կը փափաքի ինք



Ռուստամ Ռագա Նափոլիոնի անձնական առաջին թիկնապահը

ըլլալ այդ ընծան, իսկ Պաքրի ընդամաքելով Ռիտայի փափաքին, 1799-ին զինք եւ Ալին կ'ընծայէ Նափոլիոնին:

Նափոլիոն առաջին օրն իսկ Ռուստամ Ռագային կը նուիրէ ոսկեգօծ սուր եւ երկու ոսկեայ հրացան: Ռուստամ Ռագա շուտով կ'արժանանայ Նափոլիոնի համակրանքին, լիակատար վըտահուութեան ու բարեկամութեան: Ան կը նշանակուի Նափոլիոնի անձնական առաջին թիկնապահը: Ռուստամ գուարթ, ժպտաղէմ, կրթաճաշակ եւ լայնախոհ զինուոր մըն էր ու կեանքը ընդունած էր այնպէս ինչպէս որ է:

Ռուստամ Ռագա 15 տարի կը ծառայէ կայսեր, կը դառնայ անոր անբաժան շուքը. ան ներկայ էր կայսեր բոլոր հանդիպումներուն, հանդեսներուն, անոր կողքին էր բոլոր արշաւանքներուն ընթացքին՝ Սպանիա, Իտալիա, Եւրոպա, Ռուսիա. օրական կը սափրէր կայսրը, կը պատրաստէր հագուստները, զէնքերը, կը մտահոգուէր կայսեր ուտելիքով եւ լքելով իր խուցը Նոյնիսկ կը քնար կայսեր առանձնասենեակի դրան առջեւ, որպէս պահապան հսկիչ:

Կը խօսէր ֆրանսերէն, արաբերէն եւ թրքերէն: Նրբաճաշակ էր իր արեւելեան տարագով (կարմիր ֆէս, փաթթոց, գարդարուած շապիկ, շարուալ, մեքքի կապ, կաշիէ գօտի, դաշոյն, սուր եւ գոյգ հրացաններ):

Իր տարագով, վարք ու բարքով կը հմայէր ֆրանսացի ժողովուրդը եւ Եւրոպայի գրեթէ բոլոր իշխանական տունները, կը հրապուրէր Նոյնիսկ իշխանուհիները:

Նոյնիսկ ճոզէֆին՝ Նափոլիոնի կինը, հմայուած էր Ռուստամով: 1806-ին Օսդր-Լիզի արշաւանքէն ետք, ճոզէֆին Ռուստամը կ'ամուսնացնէ իր առաջին չինացի սպասուհիին աղջկան՝ Ալեքսանտրա Տոֆիլի հետ: Ռուստամ կը կազմէ իր ընտանեկան բոյնը, կ'ունենայ երկու զաւակ՝ տղայ մը, որ կը մահանայ, ու աղջիկ մը, որ ապա-

զային կ'ամուսնանայ ֆրանսացի վաճառականի մը հետ:

Ռուստամ իր ներկայութեամբ կը դառնայ հայ տիպարին դեսպանը Եւրոպայի մէջ: Նափոլիոնի հետ գրուցած պահուն Ռուստամի խորհուրդը ի նպաստ իր ազգին կը ծորէր: Այս առնչութեամբ շատ դէպքեր յիշուած են, ինչպէս օրինակ՝ Միսիթարեան Միաբանութեան գոյութիւնը, կամ Ռուսիա արշաւանքին ընթացքին երբ Նափոլիոն Մոսկուան այրելու հրաման արձակեց, Ռուստամ խորհուրդ տուաւ անոր ըսելով, որ լաւ կ'ըլլայ որ Նափոլիոն հայկական թաղամաս քաշուի՝ պաշտպանուելու կրակի ալիքներէն:

1814-ին, Նափոլիոնի թունաւորման ճախող փորձէն ետք, կ'որոշէ չհետեւիլ տիրակալին դէպի Ելպա կղզին, պատճառաբանելով թէ չ'ուզէր ամբաստանուիլ, որպէս իր տիրակալը թունաւորող: Եւ երբ Նափոլիոն ծածուկ կերպով կը վերադառնայ, իսկոյն ինքզինք կը տրամադրէ Նափոլիոնի ծառայութեան, սակայն այս անգամ տիրակալը կը մերժէ զայն:

1814-ին, Նափոլիոնի աքսորէն ետք, ան իր ինչպիսի գումարով կնոջ եւ աղջկան համար տուն մը կը գնէ կնոջ ծննդավայրէն՝ Տուրտան / Եստուէն, Ֆրանսա: Այնուհետեւ կ'անցնի Իրան, ապա Թիֆլիս: Ռուստամ իզուր կը փնտռէ ծնողքը, քոյրը եւ եղբայրները: Չինք կը դիմաւորէ Կովկասի կառավարիչը՝ Ալեքս Երմոլովը եւ կը նշանակէ իր հեծելազօրքին պետը: 1826 - 1828-ին կը մասնակցի ռուս-պարսկական պատերազմին, կ'ազատագրէ Արցախը եւ մինչեւ 1840 կը մնայ Շուշի, որմէ ետք վերադառնալով Տուրտան, իր մնացած օրերը կ'անցընէ ընտանիքին հետ: Կը մահանայ 1845-ին, Տուրտան: Ծիրիմը, որուն վրայ արձանագրուած է «Աստ Գանգչի Նափոլիոնի մեմլուք, անձնական առաջին թիկնապահ Ռուստամ Ռագա», մինչեւ օրս կը մնայ այնտեղ:

Ռուստամ իր վերջին օրերուն կը գրէ յուշերը եւ կ'ամփոփէ գիրքի մը մէջ՝ «Նափոլիոնի Առաջին Մեմլուքին Յուշագրութիւնը» խորագրով, որ կը հրատարակուի 1888-ին եւ կը նկատուի Նափոլիոնական գրականութեան հազուագիւտ գործերէն մէկը: Իր օրուան նկարիչները, արուեստագետները շատ կը փափաքէին եւ կը ջանային իր դիմանկարը կամ անձը գծել, սակայն չէին հասներ իրեն: Իր դիմանկարը կը գտնուէր միայն ամ-



Նափոլիոնի կողմէ Ռուստամին յանձնուած սուրը

երբ 13 տարեկան էր, ընտանիքին հետ ճամբորդած մէկ պահուն կը հանդիպի աւագակախումբի մը, որ կը սպանէ քոյրը եւ զինք գերի կը վերցնէ: Այդուհետեւ Յովնան քանի մը անգամ ծախուելէ ետք, 1797-ին, Իսթանպուլի մէջ կը վաճառուի Սալէի Պայ եգիպտացի կառավարիչի մը եւ կը կոչուի Ռիտա Ռուստամ: Ան կը ծառայէ կառավարիչի հեծելազօրքին մէջ: Ապա իր տիրակալին



Ռուստամի ձիւն դամբը

հետ Մաքքէ ուխտի կը մեկնի, սակայն վերադարձի ժամանակ կը զուգարդիպի Եգիպտոսի վրայ Նափոլիոնի արշաւանքին: Պայ կ'ապաստանի իր բարեկամին՝ Ահմատ Փաշա ալ-Ճազգարի տունը, Աքքա, որպէս հիւր: Սակայն փաշան կը թունաւորէ իր հիւրը՝ Պայը, անհամաձայնութեան մը պատճառաւ: Ռիտա Ռուստամ այս դէպքէն անճրկած կը փախչի Եգիպտոս եւ ծանօթի մը օգնութեամբ կ'ընդունուի Ազհարի Ելի Պաքրիի մօտ: Վերջինս զինք կը նշանակէ իր մեմլուքներուն պե-



Նափոլիոնի Կայսերական Թագադրութեան օրը, 1804

բողջական նկարներու ընդմէջէն: Ան յիշատակուած է Թոլյթոյի «Պատերազմ եւ Կաղաղութիւն» վեպին եւ Պալաքի «Իր Գործը Կասկածելի Էր» աշխատութեան մէջ:

Այսօր, երբ կը փորձենք հետեւիլ այս վաստակաւոր մեմլուքի հետքերուն. կը գտնենք Ռուստամի թորան որդին՝ Էտմոն Ռոսթան (1868 - 1918), ֆրանսացի հանրաձայնօր ակադեմիական գրող եւ հեղինակ եւ անոր գաւակները՝ Մորիս եւ Ժան, մին՝ վիպասան ու բանաստեղծ, միւսը՝ գիտնական, գրող եւ հեղինակ բազմաթիւ արժեքաւոր հատորներու:

Աղբիւրներ՝
Ֆրանսական արխիւներ
Անգլիական հանրագիտարաններ
Արաբական մամուլ
«Յերկ եւ Բերք», Լեւոն Ըառոյեան

ԿՐԿԻՆ ԿՐԱԿՈՑ, ԿՐԿԻՆ ԶՈՐԵՐ

Տիգրան Ծինպաշեան

Հայաստանեան լուրերը կրկին ահագանգային են: Ատրպեյճանի զինեալ ուժերը, իրենց կողմէ գրաւուած հայկական բարձունքներէն կրակ բացած են Ներքին Հանրի հայկական դիրքերուն ուղղութեամբ: Հայկական կողմը ունի չորս գոհ եւ մէկ վիրաւոր: Պատրուակը ատրպեյճանցի զինուորի մը վիրաւորումն է Կապանի շրջանին մէջ, ենթադրաբար Հայաստանի կողմէ եղած կրակոցի մը հետեւանքով:

Բանակցութիւններու լծուած երկու երկիրներու համար պատահածը արտասովոր է, որովհետեւ փոխադարձ ապահովագրումի եւ բարեկամութեան ջատագով պետութիւնները «սուրը պատեանը դրած» պետք է ըլլան: Անգամ մը եւս կը հաստատուի, որ խաղաղութեան միակողմանի հետապնդումը չ'առաջնորդէր ճշմարիտ խաղաղութեան:

Հայկական կողմէն մեկնաբանութիւններ առայժմ չկան: Երկրորդական աստիճանի պատասխանատուի մը զգուշացումը պատահարը չճաւալելու մասին կը վկայէ վախճանը ու խեղճացած ընթացքի մը մասին:

Օր մը առաջ Նիկոլ Փաշինեան հարցազրոյց ունէր անգլիական «Տէլիթելէկրաֆ» թերթի թղթակիցին հետ: Ուղղակի հարցումներուն պատաս-



խանելով, Նիկոլ Փաշինեան զգուշաւոր բառերով ամփոփեց «նշածողի իջեցումէն ետք» երկրպական հարթակի վրայ կատարուած բանակցութիւնները եւ խաղաղութեան հասնելու իր հաստատ որոշումը: Խաղաղութիւն ամեն գնով, ո՛չ իսկ արդար խաղաղութիւն, միայն խաղաղութիւն:

Ինչ խօսք, որ խաղաղութիւնը ցանկալի իրականութիւն է: Խաղաղութեան հասնելու համար զիջումներ հարկաւոր են, սակայն անոնք երկկողմանի պետք է ըլլան: Յարդ Հայաստանի կատարած մեծ ու փոքր զիջումներ-



րուն յաջորդած են նոր պահանջներ, անոնց ընկերացող սպառնալիքներով: Ժամանակը չէ՞ եկած արդեօք փոխելու խաղաղութիւն մուրացող խօսոյթը եւ զայն փոխարինելու իրական խաղաղութիւն պարտադրող դիրքորոշումով:

Ատրպեյճանի նախագահական արտակարգ ընտրութիւնը արեւմտեան լրատուամիջոցներուն կողմէ մեկնաբանուեցաւ իր ճիշդ բնոյթով՝ իբրեւ ընտրական խեղկատակութիւն: Բազմաթիւ հաղորդումներ կատարուեցան Ատրպեյճանի մէջ տիրող բռնապետական վարչաձեւին, քաղաքական բանտարկեալներու գոյութեան, ազատութիւններու բացակայութեան եւ յարակից հարցերու մասին: Յիշուեցան նաեւ Արցախի դէպքերը: Ատրպեյճանի ստեղծած պատկերը, իբրեւ ժողովրդավար երկիր, որ իր հողային ամբողջականութեան համար արդար պայքար կը մղէ, փուլ եկած է: Ատրպեյճան ամբողջ տարուան մը համար գրկուած է մասնակցելէ Եւրոպական խորհուրդի պատգամաւորական ժողովին: Ուշացումով, յանգաւոր ուշացումով, Արեւմուտքը կը գիտակցի ատրպեյճանական նկրտումներուն սխալին, թերեւս ալ իր աններելի կրաւորականութեան:

Ի՞նչ կը մտածէ Հայաստանի հանրութիւնը ստեղծուած անելանելի վի-

ճակէն ազատելու մասին: Կը հաղորդուի, որ իշխանութիւններու որդեգրած քաղաքականութեան նկատմամբ վստահութիւնը նուազած է: Սակայն իրենց վստահութիւնը կորսնցուցած բազմութիւնները չեն միանար ճշմարտութիւնը վաղուց քարոզող ընդդիմութեան: Աւելի՛ն. ընդդիմութիւնը մեղաւոր կը հռչակուի... իշխանութիւններու յարատեւութեան համար: Դժգոհները շատ են, սակայն՝ տարտղնուած: Ամէն դժգոհող ունի իր ճշմարտութիւնը, կացութենէն ելքի իր պատկերացումը, գոր կը նկատէ բացարձակ, միակ կարելին: Չեն միանար բողոքին, սակայն կը դատապարտեն անոր ձախողումը: Երբ ցոյց ու հաւաք կայ, կը քննադատեն անոնց կայա-



ցումը, երբ դադարին ցոյցերը, կը քննադատեն անոնց բացակայութիւնը:

Հայաստանեան քաղաքական թատերաբեմը հիմնական վերանայման կարիք ունի: Որպէսզի դադրին կրակոցները, որպէսզի չարձանագրուին անմեղ գոհեր, մտայնութիւններու, վարքագիծի, ժողովրդավարական ըմբռնումի հիմնական ու արմատական փոփոխութիւն պետք է ըլլայ:

Սպասուող փոփոխութիւնը մտքերու հոլովոյթ կ'ենթադրէ, ենթակայական է, ազգին ու հայրենիքին լինելիութեան կ'առնչուի: Չայն հրապարակելու ու ժողովրդականացնելու գործը բանական ճիգ կը պահանջէ ու յատուկ է մտաւորականութեան:

Մտաւորականութիւնը ըսելիք ու ընելիք ունի: Սպասումը ամկայ է. փաստը վկայող մտաւորականներէն մէկուն՝ Գագիկ Գրիստեանի կանխահաս մահուան առթած յուզումը եւ յուզարկաւորութեան մասնակից մարդկային հեղեղը:

ՍՐԲՈՅ ՎԱՐՊԱՆԱՆՆՆՆ...

Սկիզբ՝ էջ 1

րը յայտնեց, թէ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին այսօր տօնական մթնոլորտի մէջ է, որովհետեւ կը տօնենք յիշատակը հայ եկեղեցւոյ եւ հայոց պատմութեան առաջին հաւատքին՝ վասն հայրենեաց եւ վասն հաւատքի մղուած Վարդանանց պատերազմին, ուր Վարդան Մամիկոնեան, Ղեւոնդ Երեց, մեր սրբազան հայրապետները, հերոսներն ու զօրավարները, որպէս քրիստոնէութիւնը ընդունած ժողովուրդի գաւազներ, քաջաբար ոտքի կանգնեցան եւ նահատակութեան գնով դիմադրեցին Յազկերտ Բ. թագաւորին եւ պարսից բանակին կողմէ ի գործ դրուած կրօնափոխութեան բռնի ոյժին:

Սրբազան Հայրը աշակերտներուն թելադրեց, որ վարդանանց հերոսներուն օրինակին հետեւելով դժուարութիւններուն ու տագնապներուն մէջ չտկարանան, այլ առաւել զօրանան, որովհետեւ դժուարութիւնները մեզի կը տրուին Աստուծոյ կողմէ, որպէսզի փորձառութիւն ձեռք ձգենք, աւելի զօրանանք եւ կարողանանք յաղթական դուրս գալ՝ մեր հայեացքը ուղղելով հաւատքի հիմնադիրին՝ Քրիստոսին:

«Դուք Սրբոց Ղեւոնդեանց եւ Սրբոց Վարդանանց հետեւորդներն էք, թողնէրն էք: Հետեւաբար, անիրաժէշտ է որ որպէս քրիստոնէաներ յարգէք ձեր ուսուցիչները, հնազանդիք ձեր ծնողներուն եւ աշխատասիրութեամբ ու հաւատքով լեցուն ապրիք ձեր կեանքը, հաղորդակից դառնալով հայ ժողովուրդի պատմութեան ակունքներէն ժայթքող արժէքներուն»:

Սրբազան Հայրը մաղթեց, որ Ամենակալը օրհնէ եւ առաջնորդէ նոր սերունդի գաւազները եւ յաջողութիւն պարգեւէ անոնց, ինչպէս նաեւ խաղաղութիւն պարգեւէ Հայաստանին, Արցախին, Սուրիոյ, Լիբանանին եւ հոն, ուր բռնութիւնը կը տիրէ:

Պատարագի ավարտին, «Շողակաթ» երգչախումբը եւ աշակերտները Սրբոց Վարդանանց տօնին նուիրուած երգեր երգեցին: Ապա, եկեղեցւոյ շրջափակէն ներս, Տիկնանց Յանձնախումբը կոկիկ հիւրասիրութիւն կատարեց: Աւարտին, աշակերտները տօնական մթնոլորտի մէջ փունջ մը հայրենաշունչ երգեր երգեցին եւ յիշատակի լուսանկար մը ունեցան Սրբազան Հօր հետ:

www.kantsasar.com
www.kantsasar.com

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- Խոյ**
Այս շաբաթ ձեր յամառութեան եւ վճռականութեան շնորհիւ յաջողութեան պիտի հասնիք: Ձեր առողջութեան ալ հոգ տարէք:
- Ցուլ**
Հետաքրքրական հանդիպումներ պիտի ունենաք բարձրաստիճան մարդոց հետ: Ինքնատիպ եղէք:
- Երկուորեակ**
Անիմաստ ու դատարկ գրոյցներէն խուսափեցէք: Ձեր սիրելին հոգատարութեան կարիքը ունի: Մի՛ անտեսէք զայն:
- Խեցգետին**
Ձեր յարաբերութիւնները պետք է բարելաւէք մարդոց հետ: Անուշադրութեան հետեւանքով նիւթական կորուստ մը պիտի ունենաք:
- Առիծ**
Ձեր արտաքին տեսքին ուշադրութիւն դարձուցէք: Չափէն աւելի գումար մի՛ վատնէք հաճոյքներու համար:
- Կոյս**
Պատրաստուեցէ՛ք անակնկալներու: Ձեր մասնագիտական դիրքերը պիտի ամրապնդէք: Չնախատեսուած ծախսերէն հեռու մնացէ՛ք:
- Կշիռք**
Հրաշալի շաբաթ է ընկերներով եւ ընտանիքի անդամներով գուարճանալու համար: Փաստաթուղթերու հետ գործ մի՛ ունենաք:
- Կարիճ**
Յետաձգեցէ՛ք ձեր այն գործերը, որոնք կտրորնացում կը պահանջեն: Փորձեցէ՛ք յաղթահարել ձեր վատ հոգեկան վիճակը:
- Աղեղնաւոր**
Թեւ բարոյ շաբաթ մըն է, բայց յաջողութեան հասնելու հնարաւորութիւնները շատ են: Ապագայի մասին նոր ծրագիր մը պիտի մշակէք:
- Այծեղջիւր**
Ձեր շրջապատի մարդոց խընդիրներուն լուծումը բաւական ժամանակ պիտի խլէ ձեզ մէ: Առողջապահական հարցերով հետաքրքրուեցէ՛ք:
- Ջրիռ**
Պաշտօնի բարձրացում մը պիտի ունենաք: Ձեր հակառակորդներէն պիտի ձերբազատիք վերջնականապէս:
- Ձուկ**
Հեռացէ՛ք այնպիսի վայրերէն, ուր կարելի է գումարներ վատնել: Պարզ ունակ ու տելիքներով բաւարարուեցէ՛ք, որպէսզի չհիւանդանաք:



ՈՐՔԱՆ ԵՐԿԱՐ ՊԻՏԻ ԱՊՐԻՆՔ


Չափահաս մարդու մը մարմնին բաղադրութիւնը մօտաւորապէս հետեւեալն է.- ջուր՝ 45 լիթր, իւր՝ բաւականաչափ 7 կտոր օճառ շինելու, աղ՝ 30-40 թէյի դգալ, ծծումբ՝ լեցուն թէյի դգալ մը, շաքար՝ մօտաւորապէս 100 կրամ, լուսածին՝ բաւականաչափ 2200 լուցկիի գլուխ ծեփելու, կիր՝ բաւականաչափ փոքր խոհանոցի վանդակ մը ճերմկցնելու, կերակուրի «ստա» կէս թէյի դգալ, ածուխ՝ բաւականաչափ շինելու 9000 մատիտ: Այս ամէնը՝ շուկայի գնով հազիւ մէկ երկու տոլար կ'արժէ: Որչա՛ր հրաշալիօրէն ամենակարող Աստուած այսպիսի հասարակ նիւթեր գործածած է՝ կազմելու համար մարդկային մարմնին միլիառաւոր բջիջները, որոնք կ'ապահովեն անոր կեանքին բարոյ գործողութիւնները:

Լողութիւնը սերտօրէն կախեալ է անհատին սիրտի մկաններու վիճակէն եւ կարգ մը ուրիշ ազդակներէն: Երբ սիրտը դադորի բաբախելէ, ենթական կը մեռնի:
Հետագօտութիւն մը կատարուած է Ամերիկայի մէջ՝ մօտ 100 անձերէ կազմուած երկու խումբերու վրայ, որոնց անդամները՝ բոլորն ալ



Եթէ մարմինը նմանցնէք մեքենայի մը, վառելանիւթ մը հարկաւոր է՝ գայն բանեցնելու համար: Բայց ան չի կրնար ածուխ, փայտ կամ քարիւղ գործածել: Իր վառելանիւթը՝ տեսակ-տեսակ ու տեստեղէններն են, որոնք մարմնին կը հայթայթեն սնունդ, ուժանիւթ եւ ջերմութիւն, առանց որուն ան կը մեռնի: Իսկ վառելանիւթին այրումէն յառաջացած «մոխիր»-ը գարմանալի աղբահաւաքումի դրութեամբ մը կ'արտաքսուի, եւ աշխատող «գործաւոր»-ները կը սնուցանուին ու կը խնամուին բժախնդրի ուշադրութեամբ, ինչպէս պիտի տեսնէք հետագային:
Հետաքրքրական է հաշուել մարդու մը հարկաւոր վառելանիւթի քանակը՝ իր ամբողջ կեանքի ընթացքին.- 6000 նկանակ հաց, 4 հորթ, 8 խոզ, 4 ոչխար, 300 հաւ, 70 սագ, 100 աղաւնի, 2000 մեծ ձուկ, 2000 փոքր ձուկ, 4000 քիլոկրամ գետ-

մեներ էին սիրտի հիւանդութենէն. բացի մէկուն պատկանողները միջին հաշուով ապրեր էին 26 տարի աւելի քան միւսին մաս կազմողները: Այս երկարակեացներուն ծնողներն ալ նոյնպէս շատ ապրեր էին, եւ աւելի քիչ զաւակ ունեցեր էին: Անշուշտ գաղտնիք մը չէ՛ թէ երկարակեացութեան գըլխաւոր ազդակը ժառանգականութիւնն է: Նաեւ երեւան եկած է թէ երկար ապրող խումբին անդամները աւելի ցած արեան գերճնշում ունէին, եւ իրենց սիրտին բաբախումը միջին հաշուով 4 զարկ պակաս էր ամէն վայրկեան: Բնականոն արեան ճնշում ունեցողը աւելի քիչ ենթակայ է ուղեղային արիւնահոսութեան, եւ արեան գերճնշումին բացակայութիւնը ուրիշ օգտակար ազդակներու կ'առաջնորդէ: Այն սիրտը՝ որ շատ արագ չի տրոփեր, քիչ մը աւելի ժամանակ կը հանգչի երկու բաբախումներու միջեւ: Այս մղակը տարին 40 միլիոն անգամ կը տրոփէ առանց հանգիստի՝ բացի երկու կծկումներուն միջեւ, ինչ որ իսկապէս չի չի տեսողութիւն մըն է:



Հետագօտութեան մէջ նկատի առնուած երկար ապրող մարդիկ աւելի նիւթեր են, ու միջին հաշուով 3 քիլո տուազ կը կշռեն քան միւս խումբին պատկանողները: Օգտակար է ծանրութիւնը պակսեցնել՝ աւելի քիչ ուտելով բնածիւսային ջրատ- հաց, խմորեղէն, կարկանդակ, եւ ուրիշ ուտելիքներ՝ որոնք անխուսափելիօրէն կշիռքը կը բարձրացնեն: Յիշեալ երկարակեացները նաեւ աւելի նեղ կուրծք եւ նուրբ մէջք ունէին: Հետեւաբար լայնալանջ մարդիկ պետք չունին ի գուր գոռոզանալու: Իսկ քառասուն գարուններէն աւելի բոլորած անձերը դանդաղեցնելու են իրենց կեանքին ու գործին ընթացքը, գիտնալով թէ իրենց քսան տարեկանի աշխուժութիւնը ի սպառ կորսնցուցած են: Ընդհանրապէս ամէն չափագ անցութիւն կը կարճեցնէ կեանքի տեսողութիւնը, մասնաւոր՝ ծխախոտի գործածութիւնը:

Նախնձոր, 5000 քիլո ուրիշ բանջարեղէններ, 7000 քիլո պտուղ, 6000 լիթր կաթ, 12000 լիթր սուրճ, 450 քիլո աղ, 5000 հաւկիթ, 400 քիլո շաքար, 1000 քիլո պանիր, 10000 լիթր ջուր, եւ ուրիշ ուտելիքներ՝ աւելի փոքր քանակութեամբ:
Այս ամէնը սպառելով՝ որչա՛ր պիտի ապրի նորածին երեխան: Միջին հաշուով՝ ամերիկացի մը կը մեռնի 60 տարեկանին, եւ շատ յաճախ՝ սիրտի հիւանդութեան կամ արեան շրջանառութեան խանգարման հետեւանքով: Իսկ իւրաքանչիւր անձ կրնայ ապրիլ 35 կամ 95 տարի: Կեանքի տե-



Ռաֆֆի Սիկահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵՆՔԵՆ

- Սուրիոյ ֆուտբոլի Դաշնութիւնը երկարած գտց հաւաքականի արժանաւորի մարզիչ Յիքթոր Զոփըրի պայմանագրութիւնը մինչեւ 2026-ի համաշխարհային ֆուտբոլի ախոյեանութեան աւարտ: Ըստ սուրիական մարզական լրատուամիջոցներու, Զոփըրին պայման դրուած է կազմին ապահովել բարեկամական մրցումներ ուժեղ կազմերու հետ, ինչպէս նաեւ խումբին միացնել սուրիացի խաղացողներ, որոնք հանդէս կու գան միջազգային տարբեր խումբերու մէջ:



Աւելցնենք, որ Զոփըրի օգնական կազմին պայմանագրութիւնը եւս երկարած գուծ է:

- ՅԱԸՄ-ի պատրաստի տղոց խումբը Դամասկոսի մէջ յաջողեցաւ պարտութեան մատնել հիւրընկալ Ճարամանան՝ 103 - 66 արդիւնքով: 2ոյգ խումբերը կրկին պիտի հանդիպին Յալէպի մէջ, ուր եթէ ՅԱԸՄ-ի կազմը դարձեալ յաջողի յաղթել, պիտի փոխանցուի աւարտական քառեակ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՌԵԱԼ ՄԱՏՐԻՑ ԱՐՁԱՆԱԳՐԵՅ ԿԱՐԵՌ ՅԱՐՁԱՆԱԿ ՄԸ

Սպանիոյ ախոյեանութեան 24-րդ փուլի մրցումներուն, մայրաքաղաքի Ռեալ Մատրիտը յաջողեցաւ 4 - 0 արդիւնքով պարտութեան մատնել մրցակից Ժիրոնան եւ առանձնապէս աղիւսակի գլխաւորութեամբ:



Մրցումի սկիզբէն, Ռեալ տիրապետեց խաղարկութեան եւ կրցաւ իշխել արդիւնքին: Կազմի պրագիլից խաղացող Վինիսիոս Ժոնիքը յաջողեցաւ 5-րդ վայրկեանին կատարել կոլերու բացումը, որմէ ետք անգլիացի ճուտ Պելմիսկիամ դարձաւ երկու կոլերու հեղինակ: Ռեալի կոլերու շարքը աւարտեց պրագիլի Ռոտրիկոն: Նշենք, որ Ռեալ այս յաղթանակով 61 կետով մնաց աղիւսակի առաջին դիրքին վրայ, իսկ իրեն յաջորդեց Ժիրոնան՝ 56 կետով:

ԶԱԹԱՐ ԱՍԻՈՅ ԱՌՈՅԵԱՆ ԴԱՐՁԱՐ

Ափոյ ախոյեանութեան աւարտական մրցումին, Զաթար 3 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց Յորդանանը եւ հերթական երկրորդ անգամ ըլլալով դարձաւ Ափոյ ախոյեան: Յետաքրքրական էր, որ Զաթար իր երեք կոլերը նշանակեց տուգանային հարուածներով, ինչ որ դժգոհանք յառաջացուց յորդանանցի ժողովուրդին մօտ: Հանդիպումէն ետք, Յորդանանի կազմի խաղացողները յայտնեցին, թէ հանդիպումի իրաւարարը կողմնակցութիւն արձանագրած է Զաթարի կազմին նկատմամբ եւ անոր յաղթանակը անարդար է, ինչպէս նաեւ անդրադարձան, որ նշեալ իրաւարարը նախապէս պատժուած էր Ափոյ ֆուտբոլի Դաշնութեան կողմէ:



ԽԱԶԲԱՌ (ՄԽ 475)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
|----|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|
| 1 | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | | | | |
| 6 | | | | | | | | | | | | |
| 7 | | | | | | | | | | | | |
| 8 | | | | | | | | | | | | |
| 9 | | | | | | | | | | | | |
| 10 | | | | | | | | | | | | |
| 11 | | | | | | | | | | | | |
| 12 | | | | | | | | | | | | |

Հորիզոնական

- 1- Ժողովրդային ասացուածքը կ'ըսէ. «..... երկաթը չի ժակոտիր»: Տառի մը անունը:
- 2- Համաշխարհային նշանաւոր երաժիշտ: Արական անուն: Հակառակ շոգիացումէ կազմուած մթնոլորտային կոյտ:
- 3- Հակառակ՝ ամենամեծ ցամաքամասը:
- 4- Յակոբ Մնձուրիի պատմուածքներու հատորներէն (երկու բառ):
- 5- Արտասովոր: Գնացք:
- 6- Հակառակ՝ իրերայաջորդ տառեր: Հակառակ՝ մանր խիճ:
- 7- Տարածքի միաւոր: Այրել, մոխրացնել:
- 8- Տարագրութիւն: Զաջ:
- 9- Ունկնդրավայր: Ծար:
- 10- Էական բայ: Յարաբերական դերանուն: Ռամբօրէն՝ այո:
- 11- Կրկնուած ձայնաւորներ: Ծովերու աւազակ:
- 12- Կնամով: Հանդիսութիւն մը յիշատակող օր:

Ուղղահայեաց

- 1- Անգոր: Փոքր ալիք:
- 2- Տառի մը անունը: Բուն Բարեկենդանին յաջորդող Մեծ Պահքի Կիրակիներէն:
- 3- Կրկնուած բաղաձայններ: Հակառակ՝ 4800: Հակառակ՝ խուզուած ու մաքրուած ոչխարի բուրդ:
- 4- Հակառակ՝ խառնակ վիճակ: Ստամբուլի խողովակ:
- 5- Լեզուով մը՝ այո: Հակառակ՝ 1300: Հակառակ՝ տարածքի միաւոր:
- 6- Կայծակը կանխող ճայթիւն: Հակառակ՝ մորթային բիծ:
- 7- Հակառակ՝ հանքային համեմ: Հակառակ՝ 6030: Յարաբերական դերանուն:
- 8- Խառնատառ՝ արու: Հարցական դերանուն:
- 9- Մաքառում: Արեգակնային մոլորակներէն:
- 10- Հետեւեալ յորդորը տուող հայ հրապարակագիրին, խմբագիրին եւ «Յառաջ» օրաթերթի հիմնադիրին մականունը. «Թոյլ մի՛ տաք, տղա՛ք, որ օտարութեան գոլորշիները ծծեն այդ ոգին՝ ձեր ետին ձգելով միայն դարաւոր պատմութեան մը կմախքը»: Տառի մը անունը:
- 11- Խորանը ժողովուրդէն բաժնող մաս: Ուրիշին լուրերը գողցող:
- 12- Հայ երգչուհի: Մարմինը՝ մէջքէն վեր:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 474)

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
|----|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|
| 1 | դ | ա | ն | դ | ա | դ | ա | մ | ա | ծ | ա | |
| 2 | ը | ա | ւ | ա | ն | ա | ա | ը | | | | |
| 3 | ս | ա | ը | պ | տ | ը | ը | օ | 2 | | | |
| 4 | ե | ա | կ | ա | ը | ա | ւ | ե | ա | | | |
| 5 | ց | ա | ւ | ա | տ | ա | ն | ք | լ | ն | կ | |
| 6 | ի | ս | ա | հ | ա | կ | ա | լ | ն | վ | | |
| 7 | ն | ա | խ | կ | ա | ն | խ | ե | լ | ն | | |
| 8 | ե | | | | | ն | ե | տ | ա | ը | ա | |
| 9 | ը | ա | վ | | | | | | ն | ա | մ | |
| 10 | ը | ն | ձ | ե | տ | ե | լ | տ | դ | ե | | |
| 11 | ն | ն | ը | ս | ի | ս | ա | ն | ա | | | |
| 12 | ը | ա | ց | ա | խ | ը | մ | ա | կ | | | |

ԼՈՒՐԵՐ

| | | | | | | |
|--|---|--|---|--|---|--|
| Երկուշաբթի 19/2 6° 15° | Երեքշաբթի 20/2 5° 16° | Չորեքշաբթի 21/2 6° 17° | Հինգշաբթի 22/2 7° 17° | Ուրբաթ 23/2 7° 17° | Շաբաթ 24/2 6° 17° | Կիրակի 25/2 5° 17° |
|--|---|--|---|--|---|--|



STUDIO VENUS



STUDIO VENUS



STUDIO VENUS

ՏԵՄԵՆՆԴԱՌԱԶԻ ՆԱԽԱՏՈՆԱԿ ԵՒ ԱԽՆՂԱԿԱՆ ԽԱՐՈՅԿԻ ՀՐԱՎԱՌՈՒԹԻՒՆ ՍՐԲ. ՔԱՌԱՍՆԻՅ՝ ՄԱՆԿԱՆՅ՝ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Երեքշաբթի, 13 Փետրուար 2024-ի յետմիջօրէին, քառասորեայ Մանուկ Յիսուսի տաճար ընծայման տօնը՝ Տեառնընդառաջը հանդիսաւորապէս յիշատակուեցաւ Բերիոյ Յայոց Թեմի բոլոր եկեղեցիներէն ներս:

Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան Տեառնընդառաջի նախատօնակի արարողութեան հանդիսապետեց եւ իր հայրական պատգամը ժողովուրդին ուղղեց Սրբ. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, մեծաթիւ հաւատացեալներու ներկայութեամբ:

Հոգեկան ցնծութեամբ, ծնողները իրենց զաւակներով մասնակից դարձան արարողութեան: Առաջնորդ Սրբազան Յայրը Անդաստանի արարողութիւն կատարեց, ապա իր հայրական պատգամը ուղղեց ժողովուրդին, բնաբան ունենալով օրուան աստուածաշնչական հատուածը (Ղկ 2.22-40), ուր կը յիշուի Մանուկ Յիսուսին տաճար ընծայումը:

Սրբազան Յայրը բացատրելով աստուածաշնչական հատուածը, դիտել տուաւ, որ անոր ընդմէջէն կը պարզուի, թէ Տէրը, որ երկինքի մէջ կ'ընդունի փառք, պատիւ եւ երկրպագութիւն, ինք Մարիամ Աստուածածնայ ճամբով կու գայ եւ Աստուծոյ կը նուիրուի: Այլ խօսքով, Քրիստոս թէ՛ ինքզինք Աստուծոյ կ'ընծայէ Մարիամի ճամբով, եւ թէ՛ մարդացած վիճակով ինքզինք կ'ընծայաբերէ համայն մարդկութեան փրկութեան համար: Ան յայտնեց, թէ երկրորդ Ադամը՝ Քրիստոս եկաւ Ադամի եւ Եւայի անհնազանդութեան պատճառով դատարկուած հայրորդի յարաբերութիւնը վերահաստատելու:

Սրբազան Յայրը յայտնեց, թէ մեր զաւակները Ս. Խորանին ընծայելու գործընթացը թատերաբեմական երեւոյթ պէտք չէ ըլլայ, այլ խորապէս, Քրիստոսի նման Աստուծոյ պատկանելով եւ Տիրոջ պատուիրաններուն համաձայն ապրելով:

Սրբազան Յայրը հաստատեց, թէ Քրիստոս Է լոյսը: Երբ լոյսը ունենանք, խաւարի մէջ չենք մնար, որովհետեւ լոյսն է որ մեզի ուրախութիւն, երջանկութիւն եւ յաջողութիւն կը պարգտէ: Ան կըցեց, թէ այսօր ոչ թէ մենք կը մօտենանք Մանուկ Յիսուսին, այլ Մանուկ Յիսուսի միջոցով Աստուծոյ կ'ընծայաբերուինք: Հետեւաբար, Տեառնընդառաջի տօնին խորհուրդով լուսաւորուած, ան հրաւիրեց ներկաները՝ լոյսը աղօթքով իրենց տունները տանելու, որպէսզի Սուրբ Հոգիին առաջնորդութեամբ եւ Քրիստոսի կենդանի լոյսով, այն ինչ որ Աստուած կը շնորհէ՝ լաւապէս արժեւորեն:

Աւանդութեան համաձայն, ծնողները իրենց փոքր զաւակները ընծայաբերեցին Ս. Խորանին, ստանալու համար Աստուծոյ օրհնութիւնը:

Այնուհետեւ, հաւատացեալներուն մոմերը լուսաւորուեցան Սուրբ Խորանի կանթեղին լոյսով: Ապա, Առաջնորդ Սրբազան Յայրը հանդիսաւոր թափօրով ուղղուեցաւ դէպի եկեղեցւոյ շրջափակ, ուր տեղի ունեցաւ ասանդական խարոյկի հրավառութիւն, որուն ընթացքին եկեղեցւոյ դարպաս դասը մատուցեց փունջ մը շարականներ եւ հայրենասիրական երգեր:

Հաւատացեալները լապտերներով Քրիստոսի լոյսը խորհրդանշող ճրագը իրենց տունները տարին, Տիրոջ կենդանի լոյսով օրհնելու իրենց բնակարանները:

Մարիա Պողիկեան



STUDIO VENUS

STUDIO VENUS



STUDIO VENUS